



Ecoline
International

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՈՒՄ (ՇՄՍԱԳ)

ՍԻՍԻԱՆ-ՔԱԶԱՐԱՆ

(ՐՅՈՒՍԻՍ-ՐԱՐԱԿ ՄԻՋԱՆՑՔ)

ՃԱՆԱԴԱՐՅԱՅԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ,
ՀԱՅԱՍՏԱՆ

ՇԱՐԱՌՈՒՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ



Աղբյուր՝ նկարները Սիսիան-Քաջարան առաջարկվող ճանապարհի 3D հոլովակից, ճանապարհային դեպարտամենտ, 2022
[<https://www.youtube.com/watch?v=fu-dgAwjSsU>]

Մայիս 2023

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ՇՄՍԱԳ)

ՍԻՍԻԱՆ-ՔԱԶԱՐԱՆ

(ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՄԻՋԱՆՑՔ)

ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ,
ՀԱՅԱՍՏԱՆ

ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

Մշակված է



Ecoline
International

Եկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ
(Սոֆիա, Բուլղարիա)



SE SOLUTIONS
Advancing Environmental Sustainability

ՍԻ Ի Սոլյուշնս ՍՊԸ (ՀԱՀ)
Տլոբեն. Շոն Օ Բեյրն
Հեռ. +27 (0)12 643 0190
+27 (0)82 903 9751
Էլ.փոստ.
sobeirne@tiscali.co.za



ATMS Solutions

ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս
ՍՊԸ (Երևան,
Հայաստան)

Տլոբեն. Արտակ Տեր-Թորոսյան
Հեռ. +37491 497128
+37499 109495
Էլ.փոստ.
artak.ter-torosyan@atms.am



Տլոբեն. Մայա Գաչեչիլադե-
Բոժեսկու
Հեռ. +380 951 100 727 /
+ 359 876 63 0522
Էլ.փոստ.
mgachechiladze@ecoline-int.org

Մշակված է

Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի համար

© Եկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ, 2023

Բոլոր իրավունքները պահպանված են:
Սույն փաստաթղթի ամբողջական կամ մասնակի օգտագործումը կարող է կատարվել միայն հղում անելով սկզբնաղբյուրին:

ՓԱՍՏԱՂԹԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ

Տարբերակ	Մշակված է	Ստուգված է	Հրապարակված է	Հրապարակման ամսաթիվը	Նկարագիրը
1	Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ-ն ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս ՍՊԸ-ի հետ համատեղ	Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ և ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս ՍՊԸ	Մայա Գաչեչիլադե-Բոժեսկու (Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ)	3 հունիս 2022	Առաջին տարբերակ ՎՉԵԲ-ի համար
2				2 նոյեմբեր 2022	Երկրորդ տարբերակ ՎՉԵԲ-ի և պատվիրատուի համար
3				18 նոյեմբեր 2022	Վերջնական տարբերակ ՎՉԵԲ-ի և պատվիրատուի համար, ենթակա է թարգմանության և հրապարակման
4				26 ապրիլ 2023	Վերջնական տարբերակի թարմացում, ներառյալ՝ Ծրագրի նոր ժամանակացույցը, վերջին ներգրավածությունը, նոր շահառուները և ԵՆԲ-ի ու ԱՉԲ-ի պահանջները
5				16 մայիս 2023	Թարմացված տարբերակ՝ ՎՉԵԲ-ի և ԵՆԲ-ի մեկնաբանությունների հիման վրա: Պատրաստ է հրապարակմանը

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԶԲ	Ասիական Չարգացման Բանկ
ԿԳՊ	Կենսաբանության գործողությունների պլան
ԲևՍ	Բնապահպանական և Սոցիալական
ԲՍԶ	Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն
ՎԶԵԲ	Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկ
ՇՄԱԳ	Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատում
ՇՄԱՓԿ	Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Փորձաքննական Կենտրոն (ևսև Պետական փորձաքննական մարմին)
ԵՆԲ	Եվրոպական Ներդրումային Բանկ
ԲՍՄՊ	Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլան
ՇՄՍԱԳ	Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցություն Գնահատում
ԲՍԿՊ	Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան
ԲևՍՍ	Բնապահպանական և Սոցիալական Ստանդարտներ (ԵՆԲ-ի)
ԼՍԳ	Լավագույն Միջազգային Գործելակերպ
ՏԿևԵՆ	Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների Նախարարություն
ՀԿ	Հասարակական Կազմակերպություն
ՈՏԱ	Ոչ-Տեխնիկական Ամփոփագիր
ՀՀՃԾ	Հյուսիս-Հարավ Ճանապարհային Ծրագիր
ՏՇ	Տարաբնակեցման Շրջանակ
ԻՊ	Իրագործման Պահանջներ (ՎԶԵԲ-ի)
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՃԴ	"Ճանապարհային Դեպարտամենտ" Հիմնադրամ (Պատվիրատու)
ՇՆՊ	Շահառուների Ներգրավվածության Պլան
ԱՊ	Անվտանգության պահանջներ (ԱԶԲ-ի)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն	6
2. Ծրագրի նկարագիրը	7
3. Շահառուների ներգրավման եվ տեղեկատվության հրապարակման պահանջներ	10
3.1. ՀՀ ազգային օրենսդրական պահանջներ	10
3.2. ՎՉԵԲ պահանջներ	11
3.3. ԵՆԲ-ի պահանջներ	12
3.4. ԱՉԲ-ի պահանջներ	13
4. Շահառուների ներգրավման առկա գործելակերպը եվ նախորդ Ծրագրի ներգրավումը ...	14
4.1. 2016-2018 թվականներին Ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման ընթացքում իրականացրած շահառուների ներգրավման ամփոփագիր.....	14
4.2. ՇՄՍԱԳ-ի մեկնարկային փուլում շահառուների ներգրավման ամփոփագիր (2021 թ.)	15
4.3. Մրցույթի փաթեթում Ծրագրի ներկայացման ամփոփագիր.....	16
4.4. ՇՄՍԱԳ նախնական գնահատման փուլի շահառուների ներգրավման ամփոփագիր	17
4.5. ՇՄՍԱԳ սոցիալ-տնտեսական ուսումնասիրության ընթացքում ավարտված շահառուների ներգրավվածության ամփոփում.....	25
4.6. Շահառուների ընթացիկ ներգրավվածության ամփոփում տարաբնակեցման ծրագրի նախապատրաստման ընթացքում	25
5. Շահառուների նույնականացումը եվ վերլուծությունը.....	26
5.1. Շահառուների նույնականացման մեթոդաբանությունը	27
5.2. Շահառուների հիմնական կատեգորիաները և խմբերը	27
5.3. Շահառուների վերլուծություն.....	27
5.4. Շահառուների ներգրավման ծրագիրը	34
6. Բողոքարկման մեխանիզմ.....	46
7. Մշտադիտարկում, գնահատում եվ հաշվետվություն	49
հավելված 1 - Շահառուների ներգրավվածության միջոցառումների ամփոփագիր (2021 թվականի ապրիլից մինչեվ 2023 թվականի մայիսի վերջ)	51
հավելված 2 - Նախնական գնահատման ամփոփագիր, որը շրջանառվել է Ծրագրի տարածաշրջանում եվ տեղադրվել է առցանց 2022-ի ապրիլին	54
Հավելված 3 - Հողերի օտարման եվ վերականգնման պլանի բողոքարկման մեխանիզմի գրանցամատյան	57
Հավելված 4 - Հանրային բողոքի ձեվանմուշ	58
Հավելված 5 - Շահառուների ներգրավվածության գրանցամատյանի ձեվանմուշ	59

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ԵՎ ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. ՇՄՍԱԳ նախնական գնահատման վերաբերյալ խորհրդակցական հանդիպումների ընթացքում բարձրացված հարցերի և դրանց պատասխանների ամփոփագիր	20
Աղյուսակ 2. Արտաքին շահառուները և նրանց առնչությունը/ հետաքրքրությունը Ծրագրի նկատմամբ, ներգրավման եղանակը.....	28
Աղյուսակ 3. Շահառուների ներգրավման ծրագիր	37

Նկ. 1. Միսիան-Քաջարան ճանապարհահատվածի տեղադիրքը (Սյունիքի մարզ, Հայաստան) . 6

Նկ. 2. Կառուցվող Սիսիան-Քաջարան ճանապարհը թունելների և կամուրջների դիրքերի հետ միասին..... 9

Նկ. 3. Նախնական ՇՄԱԳ խորհրդակցական հանդիպումներից որոշ նկարներ (առաջին չորս նկար) նկարներ տարաբնակեցման պլանի նախնական ուսումնասիրության հանդիպումներից (վերջին երկու նկար)..... 19

Նկ. 4. Ծրագրի բողոքարկման մեխանիզմի սխեման 48

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը (Վարկառու կամ ՀՀ) մի քանի միջազգային վարկատուներից հայցել է ֆինանսավորում՝ Տրանսեվրոպական տրանսպորտային ընդլայնված ցանցի Հյուսիս-Հարավ ճանապարհային Միջանցքի (ՀՀՃՄ) Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի (Ծրագիր) կառուցման համար: Ակնկալվում է, որ Ծրագիրը կհամաֆինանսավորվի Վերակառուցման և Չարգացման Եվրոպական բանկի (ՎՉԵԲ կամ Բանկ), Եվրոպական Ներդրումային Բանկի (ԵՆԲ) և Ասիական Չարգացման Բանկի (ԱՉԲ) վարկային միջոցներով, ենթակա է հետագա պատշաճ ուսումնասիրության և հաստատման վարկառուների կողմից և ներառում է ներդրումային դրամաշնորհ Եվրոպական Միության Հարևանության Ներդրումային Պլատֆորմի կողմից: Իրականացնող մարմինը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ կամ Խթանող) **"Ճանապարհային դեպարտամենտ" հիմնադրամն է** (ՃԴ կամ Պատվիրատու):

Սիսիան-Քաջարան հատվածը հանդիսանում է երկրի հարավով անցնող ՀՀՃՄ-ի Հայաստանյան հատվածի մի քանի տրանշներից մեկը: Սիսիանը Քաջարանին կապող ներկայիս Հ-45 ճանապարհը անցնում է Տաթևով ու Կապանով և ունի մոտավորապես 130 կմ երկարություն (Նկ. 1): Չնայած 90 կմ/ժամ առավելագույն արագությանը, լեռնային բարդ տեղանքի պատճառով երթևեկությունը նշված ճանապարհով տևում է մոտ 3-4 ժամ: Հայաստանի և Ադրբեջանի միջև 2020 թվականի պատերազմից հետո Մ-2 ճանապարհի Գորիսից Քաջարան տանող հատվածում չի օգտագործվում ՀՀ քաղաքացիների կողմից: Այդ նպատակով, առաջարկվում է կառուցել մոտ 60 կմ երկարությամբ ՀՀՃՄ-ի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածը: ՀՀ կառավարության համար ՀՀՃՄ-ի ենթակառուցվածքային զարգացումը հանդիսանում է առաջնահերթություն:



Աղբյուրը՝ մշակված է Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ-ի և ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոյուշնս ՍՊԸ-ի կողմից

Նկ. 1. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի տեղադիրքը (Սյունիքի մարզ, Հայաստան)

ՎՉԵԲ-ը՝ իր Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականության ("ԲՍՔ") համաձայն, սույն Ծրագիրը դասում է "Ա" կատեգորիայի, քանի որ այն 10 կմ-ից ավելի երկարությամբ գոյից կառուցվող ճանապարհ է, որը կարող է ունենալ նշանակալի բնապահպանական և սոցիալական ազդեցություններ և հետևաբար ենթադրում է համապարփակ Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության Գնահատում (ՇՄԱԳ): ԱՉԲ-ի բնապահպանական անվտանգության քաղաքականությանը (2009թ.) համաձայն՝ Ծրագիրը հանդիսանում է "Ա" կատեգորիայի ծրագիր, քանի որ շատ հավանական է, որ այն կունենա նշանակալի բացասական բնապահպանական ազդեցություններ, որոնք անդառնալի են, բազմազան կամ աննախադեպ, և որոնք կարող են ազդել բավականին մեծ տարածքների վրա: ԵՆԲ-ի բնապահպանական և սոցիալական քաղաքականության (2022թ.) համաձայն, Ծրագիրը, հավանաբար, կունենա նշանակալի բնապահպանական, կլիմայական և/կամ սոցիալական ազդեցություններ և հետևաբար ենթակա է ՇՄԱԳ: Բնապահպանական և սոցիալական ոլորտի մասնագիտացված խորհրդատվական ընկերությունների միավորումը ("խորհրդատու")¹ ընտրվել է նշված ՇՄԱԳ-ը և հարակից փաստաթղթերը մշակելու և ՇՄԱԳ փաթեթը նվազագույնը 120 օրյա ժամկետով հանրայնացնելու համար: Սույն **Շահառուների ներգրավվածության պլանը ("ՇՆՊ")** հանդիսանում է ՇՄԱԳ փաթեթի բաղկացուցիչ մասը:

Սույն ՇՆՊ-ի նպատակներն են՝

- Ներկայացնել շահառուների ներգրավվածության գործընթացին առնչվող ազգային օրենսդրության և ՎՉԵԲ-ի, ԵՆԲ-ի ու ԱՉԲ-ի պահանջները,
- Նույնականացնել Ծրագրի բոլոր շահառուներին, ներառյալ անձանց, ովքեր կարող են դիտարկվել որպես ազդվող և խորհրդակցությունների գործընթացում ու Ծրագրի իրագործման ողջ կենսացիկլում կարող են կարիք ունենալ ավելի մեծ օժանդակության,
- Մշակել շահառուների ներգրավվածության ծրագիր, որը կիրագործվի Ծրագրի շրջանակներում ապահովելու համար, որ ԲՆՍ տեղեկատվությունը ժամանակին և պատշաճ կերպով տրամադրված է Ծրագրի շահառուներին, իսկ դրանց արձագանքման խողովակները հասանելի եւ գործում են,
- Սահմանել նույնականացված շահառուների հետ ներգրավվածության առարկայական և ընդունելի հաղորդակցության միջոցներ,
- Առաջարկել շահառուների բողոքների և առաջարկությունների ստացման, գրանցման և արձագանքման ընթացակարգ կամ մեխանիզմ:

2. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2015թ.-ին կատարված տեխնիկատնտեսական հիմնավորման համաձայն, Սիսիան-Քաջարան հատվածի ուղեգիծը առաջարկվել է որպես այլընտրանք, որը կբերի մեծագույն առավելությունների, մասնավորապես՝ կբարելավի կապը երկրի կարևոր տարածաշրջանի հետ՝ փոխարինելով գոյություն ունեցող վատ ճանապարհը և կտրուկ կրճատելով ճանապարհորդության ժամանակը: Այն նաև նախընտրելի է, քանի որ ավելի քիչ ազդեցություն կունենա կենսաբազմազանության, մշակութային և հողային ռեսուրսների վրա: Նախնական նախագիծն ավարտվել և հաստատվել է 2016թ.-ին, համաձայն որի ճանապարհահատվածը նախագծված է որպես մեկ երթևեկելի գոտիով ճանապարհ վերելքի բոլոր հատվածներում և երկու ուղղություններով մեկ երթևեկելի գոտիներ ունեցող թունելներով (**Նկ. 2**): Կառուցվող ճանապարհի երկարությունը մոտավորապես 60 կմ է և ունի 100 կմ/ժ նախագծային արագություն: Աշխատանքային նախագիծն

¹Միավորումը կազմված է Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ (Բուլղարիա), Էս Ի Սոլյուշնս ՍՊԸ (ՀԱՀ) և ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս ՍՊԸ (Հայաստան) խորհրդատվական ընկերություններից,

ավարտվել է 2019թ.-ին² և հաստատվել 2020թ.-ին³: 2022 թվականի կեսերից ՎՉԵԲ-ը նախաձեռնել է աշխատանքային նախագծի տեխնիկական աուդիտ⁴: Ազգային Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատումը (ՇՄԱԳ) Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի համար իրականացվել է ԱՉԲ-ի անվտանգության և ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն և դրական փորձաքննական եզրակացությունը ստացվել է 2018թ.-ի մարտին (նշված դրական փորձաքննական եզրակացությունը ուժի է մեջ էր մինչև 2019թ.-ի մարտը և նոր ազգային ՇՄԱԳ գործընթացը մեկնարկել է 2023թ.-ի մարտին, տես **Բաշին 5.4-ը**):


Առաջարկող ճանապարհի հիմնական բաղադրիչներ են՝

- 3 հիմնական ճանապարհային հանգույցներ՝ 0 կմ, 15 կմ և 57 կմ նիշերում,
- 27 կամուրջներ՝ գետերի և հովիտները հատելու և ճանապարհի ընդհանուր նախագծային աստիճանը պահպանելու համար: Կամուրջների երկարությունը տատանվում է 60 մ-ից (կամուրջ 25) մինչև 560 մ (կամուրջ 23),
- 9 թունելներ, որոնց երկարությունը տատանվում է 359 մ-ից (թունել 3) մինչև 8.64 կմ (Բարգուշատի թունել): Բոլոր թունելները ապահովվելու են երկկողմանի երթևեկությամբ,
- Գյուղտնտեսության տեխնիկայի 4 և տնային կենդանիների 5 անցումներ (բոլոր գետնանցումներ),
- 200 մ-ից մինչև 1280 մ երկարությամբ 14 սպասարկման ճանապարհներ, որոնք կծառայեն գոյություն ունեցող ճանապարհները՝ նոր ճանապարհի հետ կապելու համար:

²North-South Road Corridor Investment Program, Tranche 4: Section Sisian-Kajaran, Detailed Design, General Report, April 2019.

³ՀՀ կառավարության 27.05.2020թ.-ի №870-Ն որոշում՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի տրանշ 4-ի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման մանրամասն նախագծի հատուկ համալիր փորձաքննության ամփոփ եզրակացությանը հավանություն տալու մասին

⁴ԵՄ Հարևանության ներդրումային ծրագրի Տեխնիկական աջակցության դրամաշնորհը (կառավարվում է ՎՉԵԲ-ի կողմից՝ ԵՆԲ-ի և ԱՉԲ-ի հետ համակարգմամբ) օգտագործվել է տեխնիկական պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու համար, ներառյալ Ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման և մանրամասն նախագծման վերանայումը, որը մշակվել է 2016-2019 թվականներին և ֆինանսավորվել ԱՉԲ-ի կողմից. Այս վերանայումն իրականացվել է ՇՄԱԳ գործընթացին զուգահեռ: Մանրամասն նախագծի թարմացումը, անհրաժեշտության դեպքում, ակնկալվում է, որ կֆինանսավորվի ԾԴ-ի, համաֆինանսավորող Վարկատուների կամ կապալառուի կողմից՝ կախված փոփոխությունների բնույթից և պայմանագրի ընտրված եղանակից:



Նկ. 2. Կառուցվող Միսիան-Քաջարան ճանապարհը թունելների և կամուրջների դիրքերի հետ միասին

Աղբյուրը՝ North-South Road Corridor Investment Program, Tranche 4: Section Sisian-Kajaran, Detailed Design, General Report, April 2019

Նախատեսվում է, որ շինարարությունը կմեկնարկի 2024 թվականին և կտևի վեց տարի: Շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել միաժամանակ մի քանի տեղամասերում: Աշխատանքների առավել ինտենսիվությունը նախատեսվում է միջին տարիների համար, մինչդեռ առաջին և վերջին կիսամյակները հիմնականում հատկացվելու են համապատասխանաբար նախապատրաստական և մայթերի, գծանշման և հարդարման աշխատանքների համար: Ակնկալվում է, որ Բարգուշատի թունելի շինարարությունը կտևի մոտ հինգ տարի:

3. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱՎՄԱՆ ԴԱՅԱՆՁՆԵՐ

Ծրագրի հետ կապված շահագրգիռ կողմերի ներգրավումը կիրականացվի ազգային, ՎՉԵԲ-ի, ԵՆԲ-ի, ԱՉԳ-ի և Լավագույն Միջազգային Գործելակերպերի (ԼՄԳ) կիրառելի պահանջներին համապատասխան: Այդ պահանջները հակիրճ ներկայացված են ստորև:

3.1. ՀՀ ազգային օրենսդրական պահանջներ

ՀՀ-ն Օրիոսի կոնվենցիան⁵ վավերացրել է 2001թ.-ին: Կոնվենցիան նախատեսում է յուրաքանչյուրի իրավունքը՝ ստանալու բնապահպանական տեղեկատվություն, որը պատկանում է պետական մարմիններին, մասնակցել բնապահպանական որոշումների կայացմանը և վերանայել ընթացակարգերը, որոնք միտված են վիճարկելու վերոհիշյալ երկու իրավունքները կամ ընդհանրապես բնապահպանական օրենսդրությունը՝ չհարգելով ընդունված հանրային որոշումները: ՀՀ-ում գործում է Օրիոսի 15 կենտրոն՝ մեկը Երևանում, 14-ը՝ մարզերում⁶:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքը⁷ սահմանում է յուրաքանչյուր անձի իրավունքը դիմել տեղեկատվություն տնօրինողին՝ օրենքով սահմանված կարգով ծանոթանալու և (կամ) իր փնտրած տեղեկատվությանը ստանալու համար⁸:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքը⁹ սահմանում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ենթակա ծրագրերի ծանուցման, փաստաթղթերի, հանրային քննարկումների և բողոքարկման ընթացակարգերը և պահանջները: Օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ գործունեության տեսակները, որոնք պետք է ենթարկվեն ՇՄԱԳ-ի, բաժանվում են Ա, Բ և Գ կատեգորիաների՝ կախված շրջակա միջավայրի վրա դրանց ակնկալվող ազդեցությունից:

Համաձայն օրենքի՝ հանրային ծանուցումները և քննարկումները համատեղ իրականացվում են ծրագրի նախաձեռնողի և Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնի ("ՇՄԱՓԿ")¹⁰ և հանրային քննարկումների համար պատասխանատու պաշտոնյայի կողմից, որը ազդակիր համայնքի ղեկավարն է:

Առաջարկվող Ծրագիրը պատկանում է Ա կատեգորիայի: Այս կատեգորիայի նախագծերի համար անցկացվում են 4 հանրային քննարկումները, երկուսը՝ *Նախնական*, երկուսը՝ *հիմնական ՇՄԱԳ* փուլերում¹¹.

- Նախնական ՇՄԱԳ փուլ՝
 - 1-ին հանրային քննարկումը համատեղ կազմակերպվում է Ծրագրի ձեռնարկողի և ազդակիր համայնքների ղեկավարների կողմից ներկայացնելու համար նախատեսվող գործունեության գաղափարը,
 - 2-րդ հանրային քննարկումը համատեղ կազմակերպվում է ՇՄԱՓԿ-ի և ազդակիր համայնքների ղեկավարների կողմից ներկայացնելու և քննարկելու համար նախնական ՇՄԱԳ հայտի վերաբերյալ որոշումը,
- Հիմնական ՇՄԱԳ փուլ՝

⁵ The United Nations Economic Commission for Europe Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters <https://ec.europa.eu/environment/aarhus/>

⁶ <https://aarhus.osce.org/armenia>

⁷ ՀՕ-11-Ն առ 23.03.2003

⁸ http://www.foi.am/u_files/file/legislation/FOIeng.pdf

⁹ ՀՕ-110-Ն առ 21.06.2014

¹⁰ Ենթակա է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը

¹¹ ՀՀ Կառավարության №1325-N որոշում առ 19.11.2014 "Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին"

- 3-րդ հանրային քննարկումը համատեղ կազմակերպվում է Ծրագրի ձեռնարկողի և ազդակիր համայնքների ղեկավարների կողմից ներառելու համար հանրությանը ՇՄԱԳ-ի արդյունքների և եզրակացությունների քննարկմանը,
- 4-րդ հանրային քննարկումը համատեղ կազմակերպվում է ՇՄԱՓԿ-ի և ազդակիր համայնքների ղեկավարների կողմից ներկայացնելու համար ՇՄԱԳ հաշվետվությունը, որը ներկայացվել է Ծրագրի ձեռնարկողի կողմից ՇՄԱՓԿ:

3.2. ՎՉԵԲ պահանջներ

ՎՉԵԲ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր ծրագրերը պետք է կառուցված լինեն այնպես, որ բավարարեն ՎՉԵԲ-ի բնապահպանական և սոցիալական քաղաքականության պահանջներին, որոնք ներառում են տաս հրազործման պահանջներ (ԻՊ)՝ բնապահպանական և սոցիալական կայունության հիմնական ոլորտների համար, ներառյալ ԻՊ10-ը "Տեղեկատվության բացահայտումը և շահագրգիռ կողմերի ներգրավումը": Տվյալ Ծրագիրը համապատասխանում է 2019 թ.-ի ՎՉԵԲ-ի ԲՍԶ-ը¹²:

Ի լրումն, ՎՉԵԲ-ի Անկախ Ծրագրերի Հաշվետվողականության Մեխանիզմը¹³, որպես անկախ գործիք, նպատակ ունի նպաստել Ծրագրի ազդեցության տակ գտնվող մարդկանց և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ՎՉԵԲ-ի ֆինանսավորվող ծրագրերի վերաբերյալ սոցիալական, բնապահպանական և հանրային բացահայտման խնդիրների լուծմանը Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև կամ որոշել, թե արդյոք Բանկը հետևել է իր ԲՍԶ-ը և Տեղեկատվական հասանելիության քաղաքականության¹⁴ ծրագրին բնորոշ դրույթներին ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, վերացնել այս քաղաքականությունների հետ առկա անհամապատասխանությունները՝ միաժամանակ կանխելով Բանկի համար ապագա խնդիրները:

Համաձայն ԻՊ10-ի, շահառուների ներգրավվածությունը ներառում է հետևյալ տարրերը՝

- **Շահառուների** նույնականացում, այդ թվում՝ Ծրագրի ազդեցության տակ գտնվող կողմերի (անձանց կամ խմբերի) բացահայտում, որոնք որոշակի հանգամանքների պատճառով կրում են անբարենպաստ ազդեցություն կամ խոցելի են, և **վերլուծություն**՝ որոշելու հաղորդակցության մակարդակը, որը կիրառելի է Ծրագրին,
- **Շահառուների ներգրավվածության պլանավորում** ՇՆՊ-ի տեսքով, որը նկարագրում է, թե ինչպես է իրականացվելու ներգրավվածությունը նշված շահագրգիռ կողմերի հետ Ծրագրի ողջ կենսացիկլի ընթացքում,
- **Տեղեկատվության բացահայտում**, որը ապահովում է Ծրագրի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության, ներառյալ դրա ԲևՍ ազդեցությունների, ռիսկերի և հնարավորությունների տրամադրում շահագրգիռ կողմերին՝ **բովանդակալից խորհրդատվության** (երկկողմանի գործընթաց, որը շարունակվում է շարունակական հիմունքներով) հետ միասին,
- **Բողոքարկման մեխանիզմը** ստեղծվում է ստանալու և լուծելու համար շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները՝ Ծրագրի ԲևՍ արդյունավետության վերաբերյալ,
- **Շարունակական հաշվետվողականություն** շահառուներին՝ Ծրագրի ԲևՍ արդյունավետության վերաբերյալ:

¹² <https://www.ebrd.com/news/publications/policies/environmental-and-social-policy-esp.html>

¹³ <https://www.ebrd.com/what-we-do/independent-project-accountability-mechanism.html>

¹⁴ <https://www.ebrd.com/what-we-do/strategies-and-policies/access-to-information-policy.html>

ՎՉԵԲ-ը՝ ի լրումն Իրագործելիության պահանջներ (ԻՊ) 10-ին, մշակել է "Տեղեկատվության հրապարակում և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն" ուղեցույցը (2023թ.)¹⁵, որը ՎՉԵԲ հաճախորդներին և շահագրգիռ կողմերին տրամադրում է գործնական ուղեցույց ԻՊ10-ը մեկնաբանելու և իրականացնելու համար և առաջարկում է ԼՄԳ մոտեցումներ շահագրգիռ կողմերի ներգրավվածության տարբեր տարրերի համար:

COVID-19 համաճարակի առնչությամբ ՎՉԵԲ-ը հրապարակել է ուղեցույց¹⁶ ԻՊ10-ին՝ առաջարկելով օգտագործել "բացահայտման և շահագրգիռ կողմերի ներգրավման այլընտրանքային մեթոդներ", մասնավորապես. ավելի խորը տեղեկատվական բովանդակություն տալով ճրագրի կայքերի և տեղեկատվական թերթիկների միջոցով, տարածելով տեղեկագրեր Էլ.փոստի և հաղորդագրությունների հավելվածների միջոցով (օրինակ՝ WhatsApp, Telegram), տեղեկատվության փոխանակում և հետադարձ կապի հաստատում սոցիալական ցանցերում (օրինակ՝ Facebook, Instagram), զանգվածային լրատվամիջոցներում և տեղային տեղեկատվական տախտակների վրա հայտարարությունների տեղադրում: Սույն ՇՆՊ-ը հաշվի է առնում ՎՉԵԲ-ի խորհուրդները և առաջարկում ներգրավման այլընտրանքային մեթոդներ (**Աղյուսակ 3**):

3.3. ԵՆԲ-ի պահանջներ

ԵՆԲ-ը 2022թ.-ին հաստատել է իր Բնապահպանական և Սոցիալական Ստանդարտների ("ԲՍՍ") հավաքածուն, որին ճրագիրը պետք է հետևի: ԲՍՍ 2-ը՝ "Շահառուների ներգրավվածություն"-ը ստանդարտը ընդգծում է շահառուների ներգրավվածության կարևորությունը որպես միջոց ապահովելու համար իրավունքները հետևյալի նկատմամբ՝

- i. Հասանելիություն տեղեկատվությանը,
- ii. Հանրության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում, և
- iii. Հասանելիություն արդարադատությանը¹⁷:

Համաձայն ԲՍՍ 2-ի, ճրագրերը պետք է ունենան շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթաց, որը ներառում է առնվազն՝

- i. Շահառուների նույնականացումը և վերլուծությունը,
- ii. Բողոքարկման մեխանիզմի ստեղծումը և/կամ պահպանումը, և
- iii. Հետևյալ տարրերից մի քանիսը կամ բոլորը, ինչպես որ անհրաժեշտ է համարում ԵՆԲ-ը.
 - a. շահառուների պլանավորում,
 - b. տեղեկատվության հրապարակում,
 - c. բովանդակային խորհրդատվություններ, և
 - d. մշտադիտարկում և հաշվետվողականություն:

ԵՆԲ խմբի թափանցիկության քաղաքականությունը (2019թ.)¹⁸ սահմանում է վերջինիս մոտեցումները թափանցիկության և շահագրգիռ կողմերի ներգրավվածության նկատմամբ՝ սահմանելով դրույթներ տեղեկատվության և փաստաթղթերի ակտիվ հրապարակման և պահանջի դեպքում դրանց հանրայնացման համար:

Բացի այդ, ԵՆԲ-ի բողոքների մեխանիզմի քաղաքականությունը (2018թ.) հնարավորություն է տալիս այլընտրանքային և կանխարգելիչ լուծում տալ բողոքատուների և ԵՆԲ խմբի միջև վեճերին¹⁹: ԵՆԲ-ի բողոքների մեխանիզմի ընթացակարգերը (2018թ.)

¹⁵ <https://www.ebrd.com/information-disclosure-and-stakeholder-engagement.pdf>

¹⁶ EBRD. 2020. Stakeholder engagement (PR10) EBRD briefing note. COVID-19. <https://www.ebrd.com/covid19-consultation.pdf>

¹⁷ https://www.eib.org/attachments/publications/eib_environmental_and_social_standards_en.pdf

¹⁸ https://www.eib.org/attachments/strategies/eib_group_transparency_policy_2021_en.pdf

¹⁹ https://www.eib.org/attachments/strategies/complaints_mechanism_policy_en.pdf

ուղղված են գործընթացների պարզաբանմանը, կատարելագործմանը և պաշտոնականացմանը, որպեսզի դյուրացնեն, պարզեցնեն և ավելի լավ ապահովեն բողոքների քննարկումը²⁰:

Իր հաճախորդներին աջակցելու համար ԵՆԲ-ն իր գործառնություններում շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը ապահովելու նպատակով թողարկել է հատուկ ուղեցույց (2020թ.), որը պարունակում է առաջարկություններ շահագրգիռ կողմերի ներգրավվածության վերաբերյալ ԵՆԲ-ի պահանջները բավարարելու համար և ամփոփում է ԼՍԳ-ի մոտեցումները²¹:

3.4. ԱՉԲ-ի պահանջներ

ԱՉԲ-ի տեղեկատվության հասանելիության քաղաքականությունը (2018թ.) արտացոլում է ԱՉԲ-ի շարունակական հանձնառությունը թափանցիկության, հաշվետվողականության և շահագրգիռ կողմերի մասնակցության նկատմամբ²²: Տեղեկատվության հասանելիության քաղաքականությունը նախատեսում է հստակ, ժամանակին և պատշաճ հանրայնացում՝ տեղեկատվություն տրամադրելով Ծրագրի ազդակիր անձանց և այլ շահագրգիռ կողմերին, հստակ բողոքարկման գործընթաց և այլն: Այն նաև պարունակում է սկզբունքներ և բացառություններ արտաքին շահագրգիռ կողմերի հետ տեղեկատվության փոխանակման համար:

ԱՉԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարագիրը (2009թ.)²³ ընդգծում է բովանդակալից խորհրդատվական գործընթացները գործնականում կիրառելու և ազդակիր անձանց ու այլ շահագրգիռ կողմերին համապատասխան բնապահպանական տեղեկատվության հրապարակման կարևորությունը: Այն պահանջում է, որ վարկառու/հաճախորդը բովանդակալից խորհրդատվություն իրականացնեն ազդակիր անձանց և այլ շահագրգիռ կողմերի, ներառյալ քաղաքացիական հասարակության հետ և նպաստեն նրանց իրազեկված մասնակցությանը:

Ըստ ԱՉԲ Անվտանգության քաղաքականության հայտարարության, ինչպես նաև ՎՉԵԲ-ի և ԵՆԲ-ի չափանիշներին համապատասխան, բովանդակալից խորհրդակցությունը մի գործընթաց է, որը.

1. Մեկնարկում է Ծրագրի նախապատրաստման փուլում և իրականացվում է շարունակական հիմունքներով՝ Ծրագրի ողջ կենսացիկլի ընթացքում,
2. Ապահովում է համապատասխան և համարժեք տեղեկատվության ժամանակին հանրայնացումը, որը հասկանալի է և հեշտությամբ հասանելի ազդակիր անձանց,
3. Իրականացվում է վախից կամ հարկադրանքից զերծ մթնոլորտում,
4. Ներառական և պատասխանատու է գեներային հարցերի շուրջ, հարմարեցված է անապահով և խոցելի խմբերի կարիքներին,
5. Հնարավորություն է տալիս ներառել ազդակիր անձանց և այլ շահագրգիռ կողմերի տեսակետները որոշումների կայացման գործընթացում, մասնավորապես նախագծման, մեղմացման միջոցառումների, ակնկալվող օգուտների և հնարավորությունների փոխանակման ու այլ խնդիրների շուրջ:

Անվտանգության քաղաքականության հայտարարագիրը նաև պահանջում է վարկառուից/հաճախորդից ստեղծել մեխանիզմ՝ ստանալու և լուծելու ազդակիր անձանց մտահոգությունները և բողոքները Ծրագրի բնապահպանական արդյունավետության վերաբերյալ, ինչպես հաև համապատասխան կերպով տեղեկացնել ազդակիր անձանց այդ մեխանիզմի մասին:

²⁰ https://www.eib.org/attachments/strategies/complaints_mechanism_procedures_en.pdf

²¹ https://www.eib.org/attachments/guidance_note_on_stakeholder_engagement_in_eib_operations_en.pdf

²² <https://www.adb.org/documents/access-information-policy>

²³ <https://www.adb.org/sites/default/files/institutional-document/32056/safeguard-policy-statement-june2009.pdf>

4. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԱՌԿԱ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ ԵՎ ՆԱԽՈՐԴ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ

Սույն բաժինը ներկայացնում է շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացը, որը տեղի է ունեցել Ծրագրի մշակման վաղ փուլից՝ 2016-2018 թվականներին մինչև ընթացիկ ՇՄԱԳ գործընթացը և ՇՄԱԳ-ի մեկնարկից՝ 2021 թվականի ապրիլից մինչև 2023 թվականի մայիսի վերջը:

ՇՄԱԳ-ի և տարաբնակեցման փաստաթղթերի մշակման ընթացքում 2021 թվականի ապրիլից մինչև 2023 թվականի մայիսի վերջը, անցկացվել են ներգրավման ավելի քան 200 միջոցառումներ (տես **Հավելված 1-ը**): Մեծ մասը կազմակերպվել է ՃԴ-ի և տարածաշրջանային, համայնքային և տեղական իշխանությունների աջակցությամբ: Ներգրավումը համապատասխանում է ՎՁԵԲ-ի, ԵՆԲ-ի, ԱՁԲ-ի և ԼՄԳ-ի պահանջներին և սկզբունքներին՝ միտված շահագրգիռ կողմերի բովանդակալից ներգրավվածության ապահովմանը:

4.1. 2016-2018 թվականներին Ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման ընթացքում իրականացրած շահառուների ներգրավման ամփոփագիր

Շահառուների ներգրավվածության առաջին հանդիպումները տեղի են ունեցել են Ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման ընթացքում՝ 2016թ. մարտ-ապրիլ և նոյեմբեր ամիսներին: Հանդիպումներին ներկա են եղել հետևյալ շահառուները՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԼԵՆ), Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպությունը, Շրջակա միջավայրի նախարարությունը, Էկոնոմիկայի նախարարությունը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, Առողջապահության նախարարությունը, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն (ներկայումս կոչվում է "Կադաստրի կոմիտե") և հասարակական կազմակերպությունները (ՀԿ): Հանրային խորհրդակցությունների հաջորդ փուլի ընթացքում ներկայացվել է Ծրագրի ուղեգիծը և ՇՄԱԳ-ը: Այն ներառում էր հանդիպումներ Կապան համայնքում 2017 թվականի նոյեմբերի 10-ին (117 մասնակից, որոնցից չորսը՝ կանայք), իսկ Միսիան և Քաջարան համայնքներում՝ 2018 թվականի հունվարի 17-18-ը, (26 մասնակից, որոնցից վեցը՝ կանայք):

Խորհրդակցությունների և մասնակցության հայտերի վերաբերյալ տեղեկատվությունը տարածվել է "Հայաստանի Հանրապետություն" թերթի միջոցով և Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպության կայքում: Բացի այդ, հրավերներ են ուղարկվել անմիջապես հիմնական շահառուներին՝ Երևանի Օրիոս կենտրոնի ցանցի միջոցով: Խորհրդակցությանը մասնակցել են հանրության լայն շրջանակները և տեղական համայնքները, ինչպես նաև պետական կառույցներն ու հասարակական կազմակերպությունները:

Մի շարք առանցքային խնդիրներ են ի հայտ եկել, որոնցից մեկը գյուղատնտեսական նշանակության համայնքային հողերի օտարումն էր, որոնք չունեին սեփականության վկայականներ: Մասնակիցները տեղեկացվել են հողերի կադաստրի չափագրման և գրանցման գործընթացի, ինչպես նաև հողերի պետական գրանցումից հետո հողօգտագործման գյուղատնտեսականից տրանսպորտայինի փոխելու կարգի մասին: Քանի որ խորհրդակցությունը տեղի է ունեցել Ծրագրի նախագծման վաղ փուլում, պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ հողային հանույթի տեղադրման վայրերի, Կապանի անտառտնտեսության գոտու ազդեցության չափի, ջրամատակարարման վրա հնարավոր բացասական հետևանքների և ճանապարհների երկայնքով համայնքային հողերի հատկացման իրավական արգելքի հետ կապված հարցերը կկարգավորվեն Ծրագրի վերջնական հաստատումից հետո: Ի պատասխան հնագիտական պահպանության գոտիների վերաբերյալ մտահոգությունների՝ Ծրագրի բնապահպանական կառավարման և հնագիտության մասնագետը հավաստիացրել է, որ համապատասխան միջոցառումներ կիրականացվեն հուշարձանների պահպանման համար:

4.2. ՇՄՍԱԳ-ի մեկնարկային փուլում շահառուների ներգրավման ամփոփագիր (2021 թ.)

Սույն ՇՄՍԱԳ-ի համար խորհրդակցությունների գործընթացը սկսվել է մեկնարկային/սախագծային հանդիպումների միջոցով՝ ՃԴ-ի աջակցությամբ:

- 2021 թվականի ապրիլի 8-10-ը տեղի են ունեցել խորհրդակցություններ Սյունիքի մարզպետարանի, Քաջարանի համայնքապետարանի, Գեղիի վարչական տարածքի և "Չանգեզուր" պետական արգելավայրի ներկայացուցիչների հետ (մասնակցել են նաև ՃԴ ներկայացուցիչները):
- 2021 թվականի ապրիլի 20-ին տեղի են ունեցել խորհրդակցություններ Սիսիանի համայնքապետարանի և Դարբասի վարչական տարածքի ներկայացուցիչների հետ:

Սյունիքի մարզի և Քաջարան և Սիսիան համայնքապետարանները Ծրագրի համար նշանակել են կոնտակտային անձ՝ Ծրագրին աջակցելու և իշխանությունների և տեղական բնակչության, ինչպես նաև տեղական ՅԿ-ների հետ ՇՄՍԱԳ ներգրավման հետագա գործողությունները իրականացնելու համար:

Սյունիքի մարզպետարանի հետ հանդիպման ժամանակ ներկայացվել է Ծրագրի հիմնական նպատակը: Սյունիքի մարզպետարանի ներկայացուցիչները կարևորել են ճանապարհաշինության պոտենցիալ դրական ազդեցությունը ենթակառուցվածքների, զբոսաշրջության ոլորտի և ճանապարհային ծառայությունների (հյուրանոցներ կամ հանրային սննդի կետեր) զարգացման վրա, ճանապարհների օգտագործման ժամանակի խնայողությունը, ինչպես նաև տրանսպորտային ծախսերի կրճատումը և շուկաների ավելի մեծ հասանելիությունը տեղացիների համար, որոնք կկարողանան վաճառել իրենց արտադրանքը: Նշվեց, որ ճանապարհաշինությունը կարող է հանգեցնել տնտեսության դիվերսիֆիկացմանը (այսինքն՝ տարածաշրջանի ներքին արտադրանքի կառուցվածքում հանքարդյունաբերության գերակայության նվազեցում):

Ընդհանուր առմամբ դրական վերաբերմունք է արտահայտվել Ծրագրի Սիսիան-Քաջարան ճանապարհի վերաբերյալ նաև Քաջարանի համայնքապետարանի հետ խորհրդակցությունների ընթացքում՝ կարևորելով բնակիչների շահերը ժամանակավոր աշխատանքային հնարավորությունների առումով (ներկայումս, Քաջարանում բնակչության մեծամասնությունը աշխատում է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատում): Քաղաքային իշխանությունները պահանջել են շինարարության ընթացքում առաջացող հողային հանույթի տեղադրման վայրերը քննարկել իրենց հետ:

Սիսիանի համայնքապետարանում տեղի ունեցած հանդիպումները ցույց տվեցին, որ ակնկալվում է մեծածավալ ակտիվների օտարում՝ հաշվի առնելով տարածքում գտնվող մի քանի փոքր ֆերմերային տնտեսությունները և ավելի մեծ բիզնեսները: Հետևաբար, մասնավոր հատվածի շահառուները կպահանջեն հատուկ ուշադրություն Ծրագրի ներգրավման ընթացքում՝ կախված կապող ճանապարհների ուղիներից:

ՃԴ-ի և ՎՉԵԲ-ի կողմից Սիսիան-Քաջարան նոր ճանապարհահատվածի ուղեգծի (և համապատասխանաբար խորհրդատուի աշխատանքի շրջանակի) հաստատումից հետո, խորհրդատուն շարունակել է մեկնարկային խորհրդակցությունները:

2021 թվականի դեկտեմբերի 8-ին տեղի ունեցավ հանդիպում Սյունիքի փոխմարզպետի հետ՝ ներկայացնելու և քննարկելու խորհրդատուի աշխատանքների շրջանակը, ճանապարհահատվածը, ինչպես նաև հնարավոր ԲևՍ ազդեցությունները/հնարավորությունները: Փոխմարզպետը պարտավորվել է աջակցել խորհրդատուին ԲևՍ ուսումնասիրություններում:

2021 թվականի դեկտեմբերի 9-ին Քաջարանի և Սիսիանի համայնքապետարաններում տեղի են ունեցել հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները՝

- Ծրագրի իրականացման ներկա կարգավիճակը և հետագա քայլերը,
- Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ներկայիս սախագիծը,

- Հիմնական հնարավոր ԲևՍ ռիսկերը/օգուտները, և
- Հողի օտարման հարցերը:

Երկու համայնքապետարաններն էլ ծանոթ էին 2016-2018թթ. նախորդ խորհրդակցություններում ներկայացված նախագծին:

Հողերի օտարման ազդեցության մասշտաբներն ու տեսակները պարզելու նպատակով 2021 թվականի դեկտեմբերի 27-28-ը խորհրդատուն անցկացրել է յոթ հանդիպում Քաջարան և Սիսիան համայնքների ազդակիր գյուղական բնակավայրերի ղեկավարների և գյուղացիների հետ: Հանդիպումների արդյունքում բացահայտվել է հետևյալը՝

- Կադաստրային քարտեզները որոշակի անհամապատասխանություններ ունեն հողերի փաստացի սահմանների հետ, որոնք պետք է հաշվի առնվեն տարաբնակեցման պլանի պատրաստման ժամանակ,
- Կարող են տուժել մի շարք մասնավոր հողատարածքներ, օժանդակ շինություններ, ինչպիսիք են գոմերը և անասնագոմերը, ինչպես նաև մի քանի մասնավոր բնակելի տներ (ինչպես գործող, այնպես էլ ավերված/լքված),
- Որոշ գյուղերում պոտենցիալ ազդակիր հողատարածքները չոռոգվող վարելահողերն են,
- Որոշ ազդակիր տնային տնտեսություններ հողի նկատմամբ իրենց իրավունքների օրինականացման համար աջակցության կարիք կունենան,
- Առաջարկվող երթուղին գտնվում է Շամբի ՀԷԿ-ից մոտ 90 մ հեռավորության վրա և հատում է ՀԷԿ-ի ջրային թունելը,
- Խոշոր եղջերավոր անասունների անցուղիները պետք է դիտարկվեն նախագծում և համաձայնեցվեն Որոտնավանի, Լորի, Շենաթաղի և Դարբասի գյուղերի վարչակազմերի հետ (որոշ գյուղերում անցումները պետք է լինեն բավական մեծ, որպեսզի թույլատրեն գյուղտեխնիկայի ելքն ու մուտքը),
- Դավիթ Բեկ ամրոցը և Որոտնավանքը չեն տուժում կառուցվող ճանապարհից,
- Կառուցվող երթուղուց 50 մ հեռավորության վրա Որոտնավանում գտնվող հին գերեզմանատունը/դամբարանն ու ճանապարհի մոտ գտնվող Դարբասի պատմական "խաչքարը" պետք է պաշտպանված լինեն շինարարական աշխատանքների ընթացքում,
- Իրան-Հայաստան գազատարը 3 կետով հատվում է երթուղիով Դարբասում և մեկ կետով Գեղիում, իսկ Դարբասում մեկ կետով անցնում է ոռոգման ջրի խողովակը,
- Դարբասի ազդակիր հատվածում հողի Էրոզիայի հետ կապված խնդիր կա, որը պետք է դիտարկվի աշխատանքային նախագծման ժամանակ,
- Աղիտուում կառուցվող կամրջի տակ մանրացված քարի հանք կա, իսկ նախատեսված երթուղուց 125 մ հեռավորության վրա՝ բնության հուշարձան (քարանձավ),
- Գեղավանքում և Կավճուտում կառույցները տեղակայված են առաջարկվող երթուղու ներքևի հատվածում, և պետք է միջոցներ ձեռնարկել քարաթափումներից խուսափելու համար:

Ընդհանուր առմամբ, ՇՄՍԱԳ-ի մեկնարկային փուլում ներգրավվել են 35 հիմնական իրազեկողներ և/կամ խորհրդատուներ տարածաշրջանային, քաղաքային և տեղական մակարդակներից:

4.3. Մոցուլթի փաթեթում ծրագրի ներկայացման ամփոփագիր

2021 թվականի օգոստոսի 3-ին ՏԿԱԵՆ-ը և ՃԴ-ն անցկացրել են խորհրդակցություն՝ ներկայացնելու Սիսիան-Քաջարան ճանապարհի շինարարության տեխնիկական և

մրցութային գործընթացների մոտեցումները²⁴: Միջոցառմանը մասնակցած շինարարական ընկերությունները բարձրացրել են մի շար հարցեր, մասնավորապես՝ Հայաստանում արտադրվող և օգտագործվող ստանդարտ բետոնե կոնստրուկցիաների փոխարեն պողպատե կամուրջների նախագծման (որոնք պետք է ներկրվեն) պատճառները, արդյո՞ք հողի օտարումը կավարտվի մինչև շինարարական կապալառուները կսկսեն իրենց աշխատանքը, և ով է պատասխանատու նախատեսված ճանապարհի հետ հատվող ենթակառուցվածքները տեղափոխելու համար: ԸՂ-ն բացատրել է ընդունված տեխնիկական և նախագծային որոշումների պատճառները, պարզաբանել, որ հողը ձեռք կբերվի նախքան շինարարության կապալառուի մուտքը այնտեղ, և որ կապալառուի պարտականությունն է տեղափոխել ազդակիր ենթակառուցվածքները՝ համաձայն նախագծի:

4.4. ՇՄՍԱԳ նախնական գնահատման փուլի շահառուների ներգրավման ամփոփագիր

Նախնական գնահատման փուլի մեկնարկի և դրա շրջանակներում 30-օրյա քննարկումների մասին ԸՂ-ն հայտարարեց 2022թ. ապրիլի 14-ին²⁵՝ միաժամանակ հրապարակելով նախնական գնահատման հաշվետվությունը ու ամփոփագիրը՝ երկուսն էլ հայերեն և անգլերեն լեզուներով²⁶ և շահառուներին հրավիրեց Երևանում կայանալիք առաջին հանդիպմանը (տես **Աղյուսակ 3**): Ամփոփագիրը ներկայացված է **Հավելված 2**-ում: Պետական մարմինները և Երևանում գործող ԲևՍ ՀԿ-ները հրավիրվել են նախնական գնահատման արդյունքների վերաբերյալ առաջին հանդիպմանը պաշտոնական նամակագրության և հեռախոսազանգերի միջոցով:

2022թ. ապրիլի 18-19-ին Խորհրդատուի թիմը մեկնեց Ծրագրի տարածաշրջան և համայնքներ՝ շրջանառելու Ծրագրի նախնական գնահատման հաշվետվության և ամփոփագրի թղթային տարբերակները: Դրանք փակցվել են մարզային, համայնքային և տեղական վարչական շենքերում, որպեսզի հասանելի լինեն ցանկացած շահառուի: Այցի ընթացքում Խորհրդատուն ներկայացրել է նաև Խորհրդատվական հանդիպումների ծրագրված օրակարգը և նպատակները, ինչպես նաև համայնքների իշխանությունների հետ քննարկվել են պլանավորված հինգ տեղական հանդիպումների ժամանակացույցը, վայրերը և ժամկետները: Տեղական ինքնակառավարման մարմիններին հատուկ առաջարկվել է խրախուսել կանանց մասնակցությունը հանդիպումներին:

2022 թվականի ապրիլի 22-ին նախատեսվող Խորհրդատվական հանդիպումների մասին 5 հայտարարություն է հրապարակվել «Հայաստանի Հանրապետություն» թերթի թիվ 73 (7739) համարում: ԸՂ-ն հրապարակել է պլանավորված հանդիպումների մասին հայտարարությունները ԸՂ-ի կայքում և Ֆեյսբուքյան էջում²⁷: Խորհրդատուները այս տեղեկատվությունը տեղադրել են նաև իրենց կայքերում²⁸: Հայտարարությունների թղթային տարբերակները փակցվել են համայնքապետարանների (գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարների ստավայրերում) շենքերի տեղեկատվական վահանակներին:

Ընդհանուր առմամբ, Ծրագրի ՇՄՍԱԳ նախնական գնահատման արդյունքների հրապարակման փուլում, 2022 թվականի ապրիլ-մայիս ամիսներին անցկացվել են յոթ Խորհրդատվական հանդիպումներ (**Աղյուսակ 3**), որոնցից վեցն ընդգրկել է ԲևՍ ասպեկտները, իսկ մեկը՝ հատուկ կենտրոնացել կենսաբազմազանության խնդիրների վրա (**Նկար 3**): Նախնական գնահատման արդյունքների վերաբերյալ հանդիպումների մասնակիցներին ներկայացվել է պրեզենտացիայի տեսքով և Ծրագիրը նկարագրող

²⁴ ԸՂ-ի Youtube-յան ալիք: <https://www.youtube.com/watch?v=f5lk1j197Vk>

²⁵ Տե՛ս ԸՂ-ի պաշտոնական կայքէջը (անգլերեն և հայերեն): https://armroad.am/en/news/inner/News_14.04.2022 և https://armroad.am/am/news/inner/News_14.04.2022. Նաև հայտարարվել է Խորհրդատուի կայքում <https://ecoline-int.org/projects/armenia/sisian-kajaran/>

²⁶ <https://armroad.am/en/safeguard/environmental-impact/el-reports>

²⁷ https://armroad.am/am/news/inner/News_25.04.2022 և <https://www.facebook.com/armroad.am/posts/4969409639843357>

²⁸ Եկոլայն Ինթերնեյշլ ՍՊԸ: <https://ecoline-int.org/projects/armenia/sisian-kajaran/> և ATMS Solutions Ltd. <https://atms.am/scoping-stage-disclosure/>

հայերեն **3D կարճ տեսանյութով**: Հանդիպումների օրակարգերը ներառում էին հետևյալը.

1. Ծրագրի ներածություն և ակնարկ,
2. Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում (ՇՄՍԱԳ) և շրջանակների սահմանում,
3. Նախնական գնահատման վերաբերյալ հանդիպումների նպատակները,
4. ՇՄՍԱԳ նախնական գնահատման հիմնական արդյունքները, հնարավոր ազդեցությունները և օգուտները,
5. Շահառուների ներգրավվածության (նախնական ՇՆՊ-ը հրապարակվել է նախնական գնահատման հաշվետվության հետ միասին) և բողոքարկման մեխանիզմը, ներառյալ ՃԴ-ի և Խորհրդատուի կոնտակտային տվյալները, և
6. Հարց ու պատասխան:

Ավարտված խորհրդատվական հանդիպումների մասին տեղեկությունները և լուսանկարները հրապարակվել են Խորհրդատուի կայքէջում և LinkedIn-ի էջում²⁹:

ՃԴ-ի և/կամ Խորհրդատուների ներկայացուցիչներն անդրադարձել են բարձրացված տեխնիկական (նախագծային) և ԲևՍ հարցերին (**Աղյուսակ 3**):

Մանրամասն բացատրություններ են տրվել հողերի օտարման և փոխհատուցման մեխանիզմների վերաբերյալ և նշվել են ՇՄՍԱԳ հետագա քննարկման համար նախատեսված հարցերը, ինչպիսիք են ընտրված հողային հանույթի, խոշոր եղջերավոր կենդանիների և գյուղատնտեսական տեխնիկայի անցումների տեղակայման վայրերի վերահաստատումը, կանաչ կամուրջների զարգացումը, Լեռնաձոր բնակավայրի տարածքում պոտենցիալ ռադիոակտիվությունը և մշակվելիք մշտադիտարկման և մեղմացման միջոցառումների իրականացումը: Ծրագրի իրականացման ընթացքում առաջացող հարցերի, մեկնաբանությունների կամ բողոքների համար ներկայացվել է Ծրագրի բողոքարկման մեխանիզմը՝ ՃԴ-ի և Խորհրդատուի կոնտակտային տվյալների հետ միասին:



Գյուղ Դարբաս



Քաղաք Սիսիան

²⁹ ATMS Solutions Ltd.: <https://www.linkedin.com/feed/update/urn:li:activity:6930887757535789056/>

	
<p>Գյուղ Գեղի</p>	<p>Քաղաք Քաջարան</p>
	
<p>Գյուղ Գետաթաղ</p>	<p>Գեղի գյուղի Գեղի և Գեղավանքի բնակիչներ</p>

Նկ. 3. Նախնական ՇՄՍԱԳ խորհրդակցական հանդիպումներից որոշ նկարներ (առաջին չորս նկար) նկարներ տարաբնակեցման պլանի նախնական ուսումնասիրության հանդիպումներից (վերջին երկու նկար)³⁰

³⁰ Խորհրդատուի նկարներ

Աղյուսակ 1. ՇՄԱԳ նախնական գնահատման վերաբերյալ խորհրդակցական հանդիպումների ընթացքում բարձրացված հարցերի և դրանց պատասխանների ամփոփագիր

No.	Ամսաթիվ	Գտնվելու վայրը	Մասնակիցների թիվը ³¹ (կանայք)	Մասնակիցների կողմից բարձրացված հիմնական հարցեր/խնդիրներ	ՃԴ-ի և/կամ խորհրդատուի պատասխանները
1	21.04.2022	Երևան ³²	10 (3)	<ul style="list-style-type: none"> Կառուցվող ճանապարհի բաղադրիչների, ինչպիսիք են կամուրջները և թունելները, կայունություն Ջրի որակի վրա ազդեցության գնահատում ՇՄԱԳ շրջանակներում Ազգային ՇՄԱԳ-ի պատրաստում (ժամանակացույց և այլն) 	<ul style="list-style-type: none"> 2018 թվականին Ծրագիրն անցել է պետական համալիր փորձաքննություն և ստացել ՀՀ կառավարության միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը: Այս վերանայումը ներառում էր սեյսմիկ անվտանգության/կայունության խնդիրները: Հողի էրոզիան և այլ երկրաբանական հատկությունները պետք է դիտարկվեն նաև ՇՄԱԳ-ում: Խորհրդատուն պատրաստել է օդի, հողի և ջրի որակի, ինչպես նաև աղմուկի և թթվառումների նմուշառման և չափման պլան, իսկ դաշտային աշխատանքները կսկսվեն 2022թ.-ի մայիսին: Մշակվող ՇՄԱԳ հաշվետվությունը կօգտագործվի ազգային ՇՄԱԳ-ի և պետական փորձաքննության գործընթացում: Այնուամենայնիվ, քանի որ Շրջակա միջավայրի նախարարության կողմից տրված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացության վավերականությունը ընդամենը մեկ տարի է, նախատեսվում է ազգային ՇՄԱԳ գործընթացը սկսել ավելի ուշ փուլում:
2	02.05.2022	Միսիան	18 (3)	<ul style="list-style-type: none"> Թունելի վթարային ելքեր Փոփոխություններ Ծրագրի նախագծային փաստաթղթում Ծրագրի նախագծային փաստաթղթով 	<ul style="list-style-type: none"> Վթարային ելք կունենա միայն Բարգուշատի թունելը: Ծրագրի նախագծային փաստաթուղթն անցել է բոլոր փորձաքննությունները, ներառյալ` ՀՀ կառավարական միջգերատեսչական հանձնաժողովի կողմից պետական համալիր և Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունները: Շինարարության ընթացքում կարող են պահանջվել նախագծային փաստաթղթի չնչին փոփոխություններ: Մի քանի տարի առաջ Ծրագրի նախագծման փուլում ներկայացվել են խոշոր եղջերավոր կենդանիների և գյուղատնտեսական տեխնիկայի

³¹ Ներառյալ ՇՄԱԳ փորձագետները: Հանդիպումների մասնակիցների ցուցակները և արձանագրությունները հասանելի են ըստ պահանջի:

³² https://armroad.am/en/news/inner/News_21.04.2022_3

No.	Ամսաթիվ	Գտնվելու վայրը	Մասնակիցների թիվը ³¹ (կանայք)	Մասնակիցների կողմից բարձրացված հիմնական հարցեր/խնդիրներ	ՃԴ-ի և/կամ Խորհրդատուի պատասխանները
				<p>Նախատեսված խոշոր եղջերավոր կենդանիների անցումներ</p> <ul style="list-style-type: none"> • Հողային հանույթի գտնվելու վայրը • Ստորերկրյա ջրերի առաջացում թունեյի փորման ժամանակ • Հողի փոխհատուցման դրույթներ • Կառուցվող ճանապարհի ուղեգծի մոտ որոշ գյուղական ճանապարհների վրա ազդեցություն 	<p>անցումների վայրերը: Դաշտային սոցիալական ուսումնասիրության ընթացքում ԲՍԱԳ թիմը կքննարկի դրանց համար նախատեսված վայրերը բնակավայրերի ղեկավարների և ֆերմերների հետ՝ ևս մեկ անգամ նրանց կարծիքը ստանալու համար:</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայումս կան ութ առաջարկվող հողային հանույթի վայրեր, հինգը՝ Միսիան-Շենաթաղ և երեքը՝ Զիրս-Քաջարան հատվածում: Շինարարական կապալառուն, ընտրվելուց հետո, պետք է յուրաքանչյուր տեղամասի համար պատրաստի Շրջակա միջավայրի կառավարման պլաններ, ներառելով ազդեցությունները և մեղմացնող միջոցառումները: Հողային հանույթը կարող է հեռացվել միայն այն դեպքում, երբ Շրջակա միջավայրի կառավարման պլանները հաստատվեն համայնքի ղեկավարի և ՃԴ-ի կողմից: Հողային հանույթի ընդհանուր ծավալը մոտ 12 մլն.մ³ է: • Կատարվել են երկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտություններ: Սակայն, շինարարության ընթացքում կտրվեն լրացուցիչ պարզաբանումներ և լուծումներ: • Նախնական հաշվարկով 527 հողատարածք/գույք ենթակա էր հողի օտարման: Պետական կադաստրի վերջին տվյալներով՝ Ծրագրի համար հատկացվելու է մոտ 580 հողատարածք և գույք: Երբ հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակը հաստատվի ՀՀ կառավարության կողմից, մանրամասն դաշտային հետազոտությունները, ներառյալ ազդակիր հողամասերի չափումները և գնահատումները, կիրականացվեն անկախ գնահատողի կողմից: Կնույնականացվեն փաստացի հողօգտագործողները և նրանց հնարավոր կորուստները կփոխհատուցվեն: Կփոխհատուցվեն նաև այն հողատարածքները, որոնք ոչ պաշտոնական (ապօրինի) օգտագործվում են բնակիչների կողմից, ինչպես նաև այն մշակաբույսերը, որոնք պոտենցիալ կկորչեն Ծրագրի համար հողատարածքների հատկացման արդյունքում: Ապօրինի հողօգտագործողները կփոխհատուցվեն բերքի համար, իսկ փաստացի հողատերերը՝ հողի կորստի համար: • Մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կկազմակերպվեն մոտեցման ժամանակավոր ճանապարհներ: Եթե շինարարական աշխատանքների ընթացքում ժամանակավոր ազդակիր տարածքներում տեղի ունենա գույքային վնասներ, ապա վնասների

No.	Ամսաթիվ	Գտնվելու վայրը	Մասնակիցների թիվը ³¹ (կանայք)	Մասնակիցների կողմից բարձրացված հիմնական հարցեր/խնդիրներ	ՃԴ-ի և/կամ Խորհրդատուի պատասխանները
3	02.05.2022	Դարբաս	24 (4)	<ul style="list-style-type: none"> • Հողամասի սեփականության վկայականների բացակայություն, ինչպես նաև հնարավոր ժառանգական գույքի դեպքեր • Խոշոր եղջերավոր կենդանիների անցումների վայրերը • Հողերի օտարում և փոխհատուցումներ • Շինարարական աշխատողներին տեղավորելու կարողություններ 	<p>փոխհատուցումը կտրամադրի շինարարական կապալառու:</p> <ul style="list-style-type: none"> • Կստեղծվի փաստաբանների հատուկ թիմ, որը կաջակցի բնակիչներին՝ լուծելու և կարգավորելու այս խնդիրները: • Անհրաժեշտ է ստուգել խոշոր եղջերավոր կենդանիների անցումները: Դաշտային սոցիալական ուսումնասիրության ընթացքում նախատեսվում է դրանք քննարկել անհատական և խմբային հարցազրույցների ընթացքում՝ Ծրագրի ազդակիր բնակավայրերում, ներառյալ Դարբաս և Գետաթաղ գյուղերում: Կլինեն նաև թիրախային խմբային քննարկումներ՝ կենսական հարցերի վերաբերյալ: • Օտարվող հողամասերի ցանկը կտրամադրի Հայաստանի Հանրապետության կադաստրի պետական կոմիտեն: Ազդակիր գույքը չափվելու ու փոխհատուցվելու է և կիրառվելու է բողոքարկման մեխանիզմ: • Որոշ անհատական տներ կարելի է վարձակալել, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կստեղծվեն նոր կացարաններ:
4	02.05.2022	Շենաթաղ	11 (2)	<ul style="list-style-type: none"> • Ճանապարհի կառուցման շարժառիթը • Հողերի օտարման մեխանիզմը • Մարդկանց, խոշոր 	<ul style="list-style-type: none"> • Միսիան-Քաջարան ճանապարհահատվածը Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի մի մասն է, որը կմիացնի Հայաստանը հարևան պետությունների հետ: Ճանապարհաշինությունը շատ կարևոր է լինելու Հայաստանի տնտեսության զարգացման համար: • Հողերի օտարումը կիրականացվի ազգային և ՎՁԵԲ պահանջներին համապատասխան: Հողամասերի գնահատման սկզբունքները սահմանվում են: Կկատարվի հողատարածքների գույքագրում և կհաշվարկվեն փոխհատուցման ծախսերը: Գույքի փոխհատուցման սխեման կլինի շուկայական գինը գումարած 15%: • Դաշտային սոցիալական հետազոտության շրջանակներում

No.	Ամսաթիվ	Գտնվելու վայրը	Մասնակիցների թիվը ³¹ (կանայք)	Մասնակիցների կողմից բարձրացված հիմնական հարցեր/խնդիրներ	ՃԴ-ի և/կամ Խորհրդատուի պատասխանները
				<p>եղջերավոր կենդանիների և գյուղատնտեսական տեխնիկայի անցումների տեղակայումը</p> <ul style="list-style-type: none"> • Հողային հանույթի տեղակայումը 	<p>Նախատեսվում է անցկացնել մի շարք հարցազրույցներ Ծրագրի ազդակիր բնակավայրերում: Կլինեն հարցազրուցավարների խմբեր, որոնք կստուգեն հարցվողների հետ բոլոր կենսական հարցերը, ներառյալ խոշոր եղջերավոր կենդանիների անցումները:</p> <ul style="list-style-type: none"> • 2015-2016 թվականներին Շենաթաղ համայնքի ղեկավարը գյուղի վարչական սահմաններում տարածք է հատկացրել հողային հանույթի համար:
5	03.05.2022	Քաջարան	25 (9)	<ul style="list-style-type: none"> • Թունելների դրենաժային համակարգեր • Լեռնաձորի տարածքում ուրանի (և հետևաբար՝ ճառագայթման ցանկացած աղբյուր) հնարավոր առկայությունը ընդերքում • Հողերի օտարման մեխանիզմ 	<ul style="list-style-type: none"> • Բոլոր թունելները կունենան ջրակայուն պաշտպանություն, իսկ ջրահեռացման համակարգ կունենա միայն Բարգուշատի թունելը, քանի որ միայն այդ թունելը կունենա ավելի քան 1.0 կմ երկարություն: Ջրահեռացումը չի իրականացվի երկշերտ ջրահեռացման համակարգով: Դրենաժային համակարգից հավաքված ջուրը կկուտակվի և կօգտագործվի հրդեհաշիջման և այլ նպատակներով: • Ծրագիրը նախագծվել է 2016 թվականին: Նախատեսվող գործունեության տարածքում իրականացվել են երկրաբանական ուսումնասիրություններ և ճառագայթման ավելացման դեպքեր չեն հայտնաբերվել: • Կանցկացվի հողամասերի գույքագրում և կհաշվարկվեն փոխհատուցման ծախսերը: Գերակա հանրային շահի դեպքում գույքի փոխհատուցման սխեման կլինի շուկայական գինը գումարած 15%: Բացի այդ, կփոխհատուցվեն նաև մշակաբույսերը, ծառերը և այլ կառույցները: Բնակիչներին թույլ կտան ապամոնտաժել գործող կառույցները, ինչպես նաև հավաքել բերքը:
6	03.05.2022	Գեղի	19 (6)	<ul style="list-style-type: none"> • Բարգուշատի թունելի մոտ կայանատեղիի հնարավորություն • Ճանապարհին ավելի ընդարձակ դարձնելու հնարավորություն • Հանույթի հեռացման և տեղադրման վայրերը 	<ul style="list-style-type: none"> • Բարգուշատի թունելի մուտքերի մոտ կարող են լինել կայանատեղիներ: • Կառուցվող ճանապարհին կից բազմաթիվ պատմամշակութային հուշարձանները, հիդրոէլեկտրակայանները և այլ շինությունները անհնարին են դարձնում դրա լայնացումը: • Քիրս-Քաջարան ճանապարհի ծրագրված հատվածում ցուցադրվել են երեք հատվածներ, որոնք առաջարկվում են հողային հանույթի համար: Կարող են դիտարկվել այլընտրանքային վայրեր:

No.	Ամսաթիվ	Գտնվելու վայրը	Մասնակիցների թիվը ³¹ (կանայք)	Մասնակիցների կողմից բարձրացված հիմնական հարցեր/խնդիրներ	ՃԴ-ի և/կամ խորհրդատուի պատասխանները
				<ul style="list-style-type: none"> • Զոդերի օտարման մեխանիզմ • • Պայթեցման հետևանքով գույքի վնասման ռիսկերը 	<ul style="list-style-type: none"> • Պարզաբանվել է հողերի օտարման մեխանիզմը: Զոդերը, մշակաբույսերը, ծառերը և այլ կառույցները կփոխհատուցվեն ազգային և ՎՋԵԲ պահանջներին համապատասխան: • Մինչ պայթեցումը գոյություն ունեցող ճեղքերի վրա կփակցվեն թվագրված կաշուն պիտակներ: Եթե շինարարության ընթացքում կաշուները պատռվեն և պատերի ճաքերն ավելանան, համապատասխան փոխհատուցում կլինի:
7	10.05.2022	Երևան	4 (2)	<ul style="list-style-type: none"> • Զոդային աշխատանքների և թունելների կառուցման ժամանակ առաջացած հողային հանույթի վայրեր • Կանաչ կամուրջներ վայրի կենդանիների համար • Շինարարության և շահագործման ընթացքում կենսաբազմազանության վրա ազդեցության մշտադիտարկում 	<ul style="list-style-type: none"> • ՇՄՍԱԳ-ի խորհրդատուն կգտնի հողային հանույթի տարածքների այլընտրանքային տեղակայումներ: Տեղում քննարկվել են մի քանի տարբերակներ և առաջարկվել է համատեղ մշակել առաջարկներ: • Կանաչ կամուրջների հնարավոր վայրերի վերաբերյալ աշխատանքներ են տարվում հանդիպման մասնակիցների և այլ գործընկերների հետ. առաջարկվել է կենսաբազմազանության համայնքի հետ համատեղ մշակել առաջարկներ: • Համաձայն ՇՄՍԱԳ թիմի՝ մշտադիտարկումը շատ կարևոր է և այն կլինի ՇՄՍԱԳ-ի և ԿԳՊ գործողությունների մի մասը: Մշտադիտարկումը կարող են իրականացնել անկախ փորձագետներ և հասարակական դերակատարներ/ՀԿ-ներ:

Բոլոր մասնակիցներին առաջարկվել է տրամադրել իրենց կարծիքը Ծրագրի նախնական գնահատման արդյունքների վերաբերյալ մինչև 2022 թվականի մայիսի 12-ը, ինչպես նաև ցանկացած այլ մեկնաբանություն կամ հարցում ցանկացած ժամանակ մինչև ՇՄՍԱԳ-ի հրապարակումը կամ դրա ընթացքում (տես **Հավելված 2**): ԸՂ-ի և Խորհրդատուի կոնսուլտային տվյալները հրապարակվել են հանդիպումների ժամանակ, ինչպես նաև ամփոփագրերի (**Հավելված 2**), տեղեկատվական թերթիկների, պրեզենտացիայի, թերթերի և կայքէջի հայտարարությունների և հաշվետվության միջոցով: Ծրագրի նախնական գնահատման արդյունքների հրապարակման ժամանակաշրջանում ոչ ԸՂ-ն, ոչ էլ Խորհրդատուն որևէ գրավոր կամ հեռախոսային հաղորդակցություն չեն ստացել շահառուներից:

Նախնական գնահատման խորհրդակցական հանդիպումների ժամանակ բարձրացված հարցերին արձագանքել են անհատական հանդիպումների, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների ու շահառուների հետագա ներգրավվածության ընթացքում: Որտեղ տեղին է, դրանք ներառվել են ՇՄՍԱԳ հաշվետվության ելակետային տեղեկատվության կամ Ծրագրի իրականացման ԲևՍ առաջարկությունների բաժիններում:

4.5. ՇՄՍԱԳ սոցիալ-տնտեսական ուսումնասիրության ընթացքում ավարտված շահառուների ներգրավվածության ամփոփում

Որպես ՇՄՍԱԳ-ի սոցիալ-տնտեսական ուսումնասիրության մաս, հետագա խորհրդակցությունները՝ տարաբնույթ բնապահպանական և սոցիալ-տնտեսական հարցերի շուրջ, շարունակվել են բոլոր ազդակիր գյուղերում: Սոցիալ-տնտեսական դաշտային ուսումնասիրությունները հիմնականում ավարտվել են 2022 թվականի մայիս-հունիս ամիսներին՝ ներառելով խորը հարցազրույցներ հիմնական իրազեկողների հետ, ֆոկլուս-խմբային քննարկումներ և անհատական կամ խմբային խորհրդակցություններ ընդհանուր առմամբ 175 անձի հետ, այդ թվում՝ 80 կնոջ (մանրամասները ներկայացված են ՇՄՍԱԳ հաշվետվության Հատոր 4-ում (Սոցիալական միջավայր)):

Ներգրավումն ընդգրկել է Ծրագրի ազդեցության տակ գտնվող գյուղերի բնակիչներին/հիմնական իրազեկողներին: Տեղեկատվությունը ստացվել է դպրոցի և/կամ մանկապարտեզների տնօրեններից/ուսուցիչներից, տեղացի բժիշկներից կամ բուժքույրերից, ֆերմերներից, անասնապահներից, մեղվապահներից և օդի պատրաստողներից, հողատարածքներ և գույք օգտագործողներից կամ սեփականատերերից, մշակութային ժառանգության պահապաններից, մշտական և սեզոնային բնակիչներից, տնային տնտեսուհիներից, տեղական փոքր/միկրո բիզնեսներից, խոցելի անձանցից, առկա ճանապարհներին կից տների բնակիչներից, որոնք կարող են օգտվել շինարարական աշխատանքներից, տեղական, համայնքային և մարզային իշխանություններից, տեղական և տարածքային ՀԿ-ներից (ներառյալ Կանանց ռեսուրսային կենտրոնը), տեղական փոքր բիզնեսի հատվածից, հանրային ենթակառուցվածքների օպերատորներից և այլ շահագրգիռ կողմերից: Հատուկ ուշադրություն է դարձվել բնակիչների և այլ շահառուների հետ խորհրդակցություններին. i) պատմամշակութային և սոցիալական արժեքներ ունեցող կառույցների, վայրերի կամ օբյեկտների օգտագործման և դրանց վրա ազդեցություններից խուսափելու ուղիների վերաբերյալ, ii) ազդեցությունները կենսաբազմազանության վրա, Էկոհամակարգային ծառայությունների օգտագործման և դրանցից կախվածության վերաբերյալ, և iii) ապրելակերպի (ներառյալ տնային կենդանիների և գյուղ.տեխնիկայի անցուղիները) և գենդերային հարցերի վերաբերյալ: Արդյունքները ներառված են ՇՄՍԱԳ փաստաթղթերում:

4.6. Շահառուների ընթացիկ ներգրավվածության ամփոփում տարաբնակեցման ծրագրի նախապատրաստման ընթացքում

2022 թվականի օգոստոսին մեկնարկեց Ծրագրի տարաբնակեցման պլանի նախապատրաստումը: Որպես դրա մաս՝ 2022թ.-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ՇՄՍԱԳ-ի խորհրդատուն և ԸՂ փորձագետները 14 հանրային խորհրդակցական

հանդիպումներ անցկացրեցին հողատարածքների սեփականատերերի/օգտագործողների հետ, որոնք կազմվեցին Ծրագրի հողերի ձեռքբերումից (Ծրագրի ազդակիր անձինք) և տեղական իշխանությունների հետ:

Հանդիպումները տեղի են ունեցել բոլոր ազդակիր գյուղերում և ընդհանուր առմամբ հավաքել են 140 մասնակից³³: Ծրագրի ազդակիր անձինք հանդիպումների մասին տեղեկացվել են վարչական միավորների ղեկավարների միջոցով նիստերից յոթ օր առաջ: Տեղական իշխանություններին հատուկ առաջարկվել է խրախուսել կանանց մասնակցությունը հանդիպումներին: Չուզահեռաբար առաջիկա հանդիպումների մասին հայտարարություններ են ուղարկվել տեղական ինքնակառավարման մարմիններին էլեկտրոնային փոստով, տեղադրվել ազդակիր գյուղերի հայտարարությունների տեղեկատվական վահանակներին: Մինչ խորհրդակցական հանդիպումները պատրաստվել է հողի օտարման և կենսամիջոցների վերականգնման տեղեկատվական թերթիկը: Վերջինս բաժանվել է հանդիպումների մասնակիցներին, և լրացուցիչ օրինակներ են մնացել վարչական միավորների ղեկավարներին՝ հանդիպումներին չներկայացած Ծրագրի ազդակիր անձանց բաժանելու համար:

Խորհրդակցական հանդիպումների օրակարգը հետևյալն էր՝

- Ծրագրի նախագծման, նպատակների, շահառուների և իրականացման կարգի ներկայացում,
- Հողերի օտարման և տարաբնակեցման հիմնական փուլերի նկարագրությունը, մասնավորապես՝ նախագծում, չափագրում, մարդահամար և սոցիալ-տնտեսական հետազոտություն, նշանավոր տիրույթի ճանաչում, տարաբնակեցման պլանի պատրաստում և դրա իրականացում,
- Փոխհատուցման և կենսամիջոցների վերականգնման իրավասության և իրավունքների բացատրություն՝ ըստ կորստի տեսակի և վերջնաժամկետի,
- Բողոքների ներկայացման մեխանիզմի ներկայացում, մասնավորապես՝ բողոքների վերանայման համար պատասխանատու կողմերի դերերն ու պարտականությունները, լուծման ուղիներն ու մեթոդները, բողոքի քննության և պատասխանի տրամադրման ժամանակացույցը,
- Հարց և պատասխան և բողոքների գրանցում, եթե այդպիսիք կան:

Հանդիպումների արդյունքները փաստաթղթավորվել են և կցվելու են Տարաբնակեցման պլանին:

Հետագա հանրային հանդիպումներ և անհատական խորհրդակցություններ կանցկացվեն Տարաբնակեցման պլանի նախագիծը քննարկելու համար: Նախաձեռնող միջոցառումներն են՝ i) մարդահամարի ժամանակ հայտնաբերված խոցելի տնային տնտեսությունների ներգրավումը և ii) խորհրդատվություններին կանանց մասնակցության ավելացումը: Այս միջոցառումները ներառված են Տարաբնակեցման պլանի ներգրավվածության պլանավորման գործընթացում:

5. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՎԵՐՆՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Շահառուները սահմանվում են որպես տարբեր անհատներ կամ խմբեր, որոնք i) ազդեցության են ենթարկվում կամ կարող են ազդվել (ուղղակի կամ անուղղակի) Ծրագրի կողմից (**ազդակիր կողմեր**), կամ ii) կարող են Ծրագրում հետաքրքրություն ունենալ (**այլ շահագրգիռ կողմեր**)³⁴:

³³ Հանդիպումների արձանագրությունը կրապարակվի որպես Վերաբնակեցման պլանի մաս:

³⁴ ՎՉԵԲ-ի ԻՊ 10՝ Տեղեկատվության հանրայնացում և շահառուների ներգրավում

5.1. Շահառուների նույնականացման մեթոդաբանությունը

Ծրագրի առնչությամբ շահառուների նույնականացումը իրականացվել է հետևյալ չափանիշների հիման վրա՝

- **Ազդեցություն**՝ Ծրագրի իրականացումը կարող է էականորեն ազդել որոշակի սոցիալական խմբի վրա (շահառուներ),
- **Ներգործություն**՝ Սոցիալական խումբը կարող է էական ներգործություն ունենալ Ծրագրի իրականացման գործընթացի վրա,
- **Համագործակցություն**՝ Հնարավորություններ Ծրագրի Պատվիրատուի և տվյալ սոցիալական խմբի միջև գործընկերական հարաբերությունների ստեղծման համար, և
- **Հետաքրքրություն**՝ Սոցիալական խումբ կամ անհատներ, ովքեր պարտադիր չէ, որ ուղղակիորեն ազդվեն Ծրագրից, սակայն կարող են (կամ չեն կարող) հետաքրքրություն ցուցաբերել դրա նկատմամբ:

5.2. Շահառուների հիմնական կատեգորիաները և խմբերը

Ծրագրի Շահառուների վերլուծության նպատակով վերջիններս խմբավորվել են հետևյալ երկու հիմնական կատեգորիաների՝

- **Ներքին շահառուներ**, ներառյալ Ծրագրի իրականացմանը ներգրաված ընկերություններ, նրանց ղեկավարությունը, անձնակազմը և բաժնետերերը, ինչպես նաև Ծրագրի իրականացման մեջ ներգրավված կապալառուներն ու ենթակապալառուները և դրանից օգուտներ ստացողները (ներդրողներ, բաժնետեր), և
- **Արտաքին շահառուներ**, ներառյալ ընկերություններ և անհատներ, որոնք ներգրավված չեն Ծրագրում (ՃԴ-ի, կապալառուների և ենթակապալառուների աշխատակիցները), իշխանությունները, որոնք ներգրավված են (կներգրավվեն) Ծրագրի հաստատման գործընթացում, Ծրագրի ազդակիր տեղական բնակչությունը և շահագրգիռ հանրությունը:

Սույն ՇՆՊ-ն նախատեսված է ապահովելու համար ՃԴ-ի ներգործակցությունը արտաքին շահառուների հետ: Արդյունավետ և բովանդակալից ներգրավվածությունն ապահովելու համար Ծրագրի արտաքին շահառուները խմբավորվել են որպես՝

- Հնարավոր ազդակիր կողմեր,
- Հնարավոր խոցելի խմբեր,
- Պետական մարմիններ և կառավարություն,
- Մարզպետարաններ,
- Տեղական (համայնքային), ներառյալ գյուղական իշխանություններ, և
- Այլ շահառուներ (ՀԿ-ներ, ՉԼՍ-ներ, ակադեմիական խմբեր, բիզնես և այլն):

5.3. Շահառուների վերլուծություն

Արտաքին շահառու խմբերի ցանկը և Ծրագրի հետ դրանց առնչությունը և/կամ կապված շահերը, որոնք նույնականացվել են գրասենյակային ուսումնասիրությունների և Սյունիքի մարզպետարանի, Սիսիան ու Քաջարան համայնքների ներկայացուցիչների հետ հանդիպումների, խորհրդակցությունների և խորհրդատվությունների հիման վրա, ներկայացված են ստորև (**Աղյուսակ 3**):

Ցանկացած շահառու, ով ներառված չէ ներքոհիշյալ աղյուսակում, բայց ցանկանում է տեղեկատվություն ստանալ Ծրագրի և դրա ԲևՍ ասպեկտների և ազդեցությունների մասին, կարող է դիմել

Պատվիրատուին (կոնտակտները նշված են Բաժին 6-ում) շահառուների ռեգիստրում իր հայցը ներառելու խնդրանքով:

Աղյուսակ 2. Արտաքին շահառուները և նրանց առնչությունը/ հետաքրքրությունը Ծրագրի նկատմամբ, ներգրավման եղանակը

Շահառուների խմբերը	Հետաքրքրությունը / առնչությունը	Ներգրավման եղանակը
ՀՆԱՐԱՎՈՐ ԱՉՂԱԿԻՐ ԿՈՂՄԵՐ		
<p>Այն բնակավայրերի բնակիչները, որոնք հատվում են գործող և կապող ճանապարհներով, որոնք օգտագործվելու են Ծրագրի տրանսպորտի կողմից կամ գտնվում են կառուցվող ճանապարհի (շինհրապարակների) մոտ³⁵</p> <ul style="list-style-type: none"> Միսիան համայնք՝ Իշխանասար, Նորավան, Վաղատին, Որոտնավան, Շամբ, Դարբաս, Գետաթաղ, Լոր և Շենաթաղ գյուղական բնակավայրեր: Քաջարան համայնք՝ Վերին Գեղավանք, Գեղավանք, Գեղի, Գետիշեն, Նոր Աստղաբերդ, Աջաբաջ, Զիրս, Զարուտ, Կաթնառատ, Փոկարուտ, Լեռնածոր, Կավճուտ, Բաբիկավան, Անդրկավան և Ձաղիկավան գյուղական բնակավայրեր: 	<p>Կարող են՝</p> <ul style="list-style-type: none"> Ազդվել շինանյութերի տեղափոխման, աղմուկի, թրթռումների, օդի աղտոտվածության և ճանապարհային անվտանգության խնդիրների կամ շինարարության հետ կապված այլնի արդյունքում, Հետաքրքրված լինել զբաղվածության հնարավորություններով, Շահագրգռված լինել օգտվել տնտեսական հնարավորություններից, որոնք Ծրագիրը կարող է բերել համայնքներին / ճանապարհային զարգացումներին: 	<p>Հանրային հանդիպումներ Ֆոկուս խումբ քննարկումներ Գրավոր տեղեկատվության հրապարակում Հաղորդակցություն ՉԼՍ-երի հետ Կապ համայնքի հետ Հատուկ նպատակային միջոցառումներ (հանդիպումներ) Անհատական հանդիպումներ</p>
<p>Ֆերմերներ, հողատարածքներ և գույք օգտագործողներ կամ սեփականատերեր, որոնց հողերը կամ ակտիվները կարող են ընկնել կառուցվող ճանապարհի օտարման գոտում (ներառյալ երեք հանգույցները) և Ծրագրի այն բաղադրիչների ազդեցության գոտում, որոնց գտնվելու վայրը դեռևս հաստատված չէ կամ անհայտ է (հողային հանույթի տեղադրման վայրեր, շինարարական ճամբարներ և այլն), ինչպես նաև նրանք, ովքեր կազմվեն ճանապարհների շահագործման փուլում հողօգտագործման սահմանափակումների պատճառով:</p> <p>Միսիան համայնք՝ Իշխանասար, Միսիան, Նորավան, Վաղատին, Որոտնավան, Շամբ, Ույծ, Աղիտու, Դարբաս, Գետաթաղ, Լոր և Շենաթաղ գյուղական բնակավայրեր:</p> <p>Քաջարան համայնք՝ Զիրս, Զարուտ, Գեղի, Վերին Գեղավանք, Գեղավանք, Գետիշեն, Ոչեթի, Նոր Աստղաբերդ,</p>	<p>Կարող են՝</p> <ul style="list-style-type: none"> Ենթարկվել հողօգտագործման/հասանելիության սահմանափակումների, հողի ժամանակավոր կամ մշտական օտարման/սերվիտուտի հետ կապված ազդեցությունների, Հետաքրքրված լինել աշխատանքի հնարավորություններով, Շահագրգռված լինել օգտվել տնտեսական հնարավորություններից, որոնք Ծրագիրը կարող է բերել համայնքներին: 	<p>Հանրային հանդիպումներ Ուսումնասիրություններ Ֆոկուս խումբ քննարկումներ Գրավոր տեղեկատվության հրապարակում Հաղորդակցություն ՉԼՍ-երի հետ Կապ համայնքի հետ Հատուկ նպատակային միջոցառումներ (հանդիպումներ) Անհատական հանդիպումներ</p>

³⁵ Այս ցանկը պետք է վերանայվի Ծրագրի համար Տրանսպորտի կառավարման պլանը պատրաստելիս և Ծրագրի շինարարական երթուղիների իրական երթուղին որոշելիս

Շահառուների խմբերը	Հետաքրքրությունը / առնչությունը	Ներգրավման եղանակը
<p><i>Կավճուտ, և Ձաղիկավան գյուղական բնակավայրեր:</i></p>		
<p>Գործող և կապող ճանապարհների կամ շինհրապարակների մոտ/կողքին գտնվող փոքր և միջին ձեռնարկությունները և դրանց աշխատակիցները:</p>	<p>Կարող են՝</p> <ul style="list-style-type: none"> • Ունենալ մուտքի սահմանափակումներ Ծրագրի աշխատանքների պատճառով, • Շահագրգռված լինել եկամուտների և գնումների ավելացմամբ Ծրագրի գործունեության արդյունքում: 	<p>Հանրային հանդիպումներ Գրավոր տեղեկատվության հրապարակում Անհատական հանդիպումներ</p>
<p>Հանրային ենթակառուցվածքների օպերատորները և կրանց աշխատակիցները (ինչպիսիք են՝ ՀԷԿ-երը և այլ գազի և էլեկտրաէներգիայի փոխանցման ենթակառուցվածքներ, որոնք տեղակայված են կառուցվող ճանապարհի մոտ):</p>	<p>Կարող են՝</p> <ul style="list-style-type: none"> • Ծրագրի իրականացման պատճառով ունենալ հողի օտարման և մուտքի սահմանափակումների ինդիկատորներ: 	<p>Անհատական հանդիպումներ Աշխատաժողովներ Գրավոր տեղեկատվության հրապարակում Նամակներ/Էլ.նամակներ/զանգեր</p>
<p>Տաթև-Կապան ճանապարհի երկայնքով տեղակայված ծառայություններ մատուցողներ (զբոսաշրջություն, հյուրատներ, հասարակական սննդի կետեր և այլն):</p>	<p>Կարող են՝</p> <ul style="list-style-type: none"> • Ունենալ ծառայությունների նվազ պահանջարկ թունելի շահագործումից հետո երթևեկության հոսքի նվազման պատճառով, • Հետաքրքրված լինել մատակարարումների հնարավորություններով և ծառայությունների դիվերսիֆիկացմամբ: 	<p>Հանրային հանդիպումներ Գրավոր տեղեկատվության հրապարակում Անհատական հանդիպումներ</p>
<p>Եկեղեցիներ, գերեզմանատներ կամ այլ սոցիալական կամ կրոնական հաստատություններ, որոնք գտնվում են կառուցվող ճանապարհին, գործող և կապող ճանապարհների մոտ և դրանցից օգտվողները (ներառյալ մշակութային ժառանգության հուշարձանների/եկեղեցիների պահպանության պատասխանատուները), ինչպես նաև այն հողամասերի սեփականատերերը, որոնց մուտքը կարող է սահմանափակվել:</p>	<p>Կարող են ազդվել մուտքի սահմանափակման պատճառով:</p>	<p>Հանրային հանդիպումներ Տեղեկատվություն սոցիալական կառույցներում Գրավոր տեղեկատվության հրապարակում Անհատական հանդիպումներ</p>
<p>Հարակից օբյեկտներ (ենթակա են ճշտման):</p> <ul style="list-style-type: none"> • Նման օբյեկտների ժամանակավոր և մշտապես օտարման/վարձակալության ենթակա հողամասերի սեփականատերերն ու օգտագործողները: 	<p>Կարող են՝</p> <ul style="list-style-type: none"> • Ենթարկվել ազդեցության պայմանավորված հողի ժամանակավոր կամ մշտական օտարման/սերվիտուտի հետ, • Հետաքրքրված լինել աշխատանքի հնարավորություններով: 	<p>Նույնը ինչ-որ վերը նշված ազդակիր հողերի օգտագործողների / սեփականատերերի համար</p>
ՀԱՆՐԱՎՈՐ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐ		
<p>Աղքատության մակարդակից ցածր ապրող ընտանիքներ, թոշակառուների գլխավորությամբ ընտանիքներ առանց օժանդակության, միակողմանի ծնողազուրկ ընտանիքներ, կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններ առանց աշխատող</p>	<p>Կարող են՝</p> <ul style="list-style-type: none"> • Դժվարություններ ունենալ կապված տեղեկատվության հասանելիության կամ հասկանալու հետ, Ծրագրի ԲևՍ ասպեկտների վերաբերյալ 	<p>Հանրային հանդիպումներ Հատուկ նպատակային միջոցառումներ (հանդիպումներ)</p>

Շահառուների խմբերը	Հետաքրքրությունը / անջությունը	Ներգրավման եղանակը
<p>մեծահասակների, բազմազավակ ընտանիքներ, հաշմանդամություն ունեցող անձինք:</p>	<p>հետադարձ կապ տրամադրելու կամ իրենց իրավունքները պաշտպանելու համար հատուկ օգնության կարիք ունենալ,</p>	<p>Գրավոր տեղեկատվության հրապարակում Անհատական հանդիպումներ Խորհրդատվական աջակցություն</p>
<p>Լեռնային Ղարաբաղից տեղահանվածները, ովքեր բնակվում են այն բնակավայրերում, որոնք հատվում են կամ մոտ են գործող և կապող ճանապարհներին:</p>	<p>• Հետաքրքրված լինել ժամանակավոր աշխատանքի հնարավորություններով: <i>[Ծանոթություն. ՇՄՍԱԳ-ի և Տարաբնակեցման պլանի շրջանակներում ավարտված սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունները չեն հայտնաբերել որևէ անձ, որը խոցելի կլինի հայերենի իմացության բացակայության պատճառով, հետևաբար այլ լեզուներով տեղեկատվության հրապարակումը պարտադիր չէ]</i></p>	<p>Գրավոր տեղեկատվության հրապարակում Անհատական հանդիպումներ Խորհրդատվական աջակցություն</p>
<p>Երեխաներ, ովքեր ապրում են այն բնակավայրերում, որոնք հատվում են գործող և կապող ճանապարհների հետ, կամ որոնք գտնվելու են շինհրապարակներին մոտ:</p>	<p>Կարող է ենթարկվել ռիսկերի՝ դեպի Ծրագրի շինհրապարակ և հակառակը տրանսպորտային միջոցների/մեքենաների երթևեկության հետ կապված:</p>	<p>Թիրախային հանդիպումներ դպրոցներում Հանրային հանդիպումներ Գրավոր տեղեկատվության հրապարակում</p>
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ		
<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (ՏԿԱԵՆ)՝</p> <ul style="list-style-type: none"> • Ճանապարհային դեպարտամենտը (ՃԴ) և իր կազմում ընդգրկված Շրջակա միջավայրի վրա ազդեցության կառավարման բաժինը և Սոցիալական ազդեցությունների և վերաբնակեցման բաժինը: 	<ul style="list-style-type: none"> • Հիմնական գործընկերներից մեկը, որը պատասխանատու է տրանսպորտային ոլորտում ծրագրերի արդյունավետ իրականացման համար՝ ՃԴ-ն է: • ՇՄՍԱԳ-ի և այլ գործողությունների համար Ծրագիրը նաև սերտորեն կհամագործակցի ՃԴ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների կառավարման բաժնի և Սոցիալական ազդեցությունների և տարաբնակեցման բաժնի հետ: 	<p>Աշխատաժողովներ Հանրային հանդիպումներ Անհատական հանդիպումներ Գրավոր տեղեկատվության հրապարակում Նամակներ/Էլ.նամակներ/զանգեր</p>
<p>Շրջակա միջավայրի նախարարություն (ՇՄՆ)՝</p> <ul style="list-style-type: none"> • Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ, • Անտառային կոմիտեն և «Հայանտառ» ՊՈԱԿ-ը, «Սիսիանի անտառտնտեսություն» և «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղերը: <p>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին:</p>	<ul style="list-style-type: none"> • Ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը: ՇՄՆ-ն իր հիմնական ստորաբաժանումների միջոցով կունենա վարչական իրավասություն Ծրագրի հաստատման գործընթացների նկատմամբ՝ շրջակա միջավայրի պաշտպանության օրենսդրության համաձայն: • Պատասխանատու է ազգային ՇՄԱԳ փորձաքննության և վերահսկողության, ինչպես նաև Ծրագրի իրականացման շրջանակներում բնապահպանական օրենքների կիրառումն ապահովելու համար: 	<p>Աշխատաժողովներ Հանրային հանդիպումներ Անհատական հանդիպումներ Գրավոր տեղեկատվության հրապարակում Նամակներ/Էլ.նամակներ/զանգեր</p>

Շահառուների խմբերը	Հետաքրքրությունը / առնչությունը	Ներգրավման եղանակը
	<ul style="list-style-type: none"> Պատասխանատու է անտառտնտեսության կառավարման համար: 	
<p>Հայաստանի կադաստրի պետական կոմիտե:</p>	<p>Վարում է անշարժ գույքի պետական ռեգիստրը, նպաստում հողային քաղաքականության մշակմանը և իրականացմանը: Կոմիտեի հետ համագործակցության կարևորությունը պայմանավորված է հողի օտարման հարցերով:</p>	<p>Խորհրդատվական հանդիպումներ Նամակներ/Էլ.նամակներ/զանգեր</p>
<p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող Միսիանի և Կապանի պատմության թանգարանները:</p>	<ul style="list-style-type: none"> Հայաստանի պատմամշակութային ժառանգության պատասխանատու: Շահագրգռված է խուսափել տեղական պատմամշակութային վայրերի վրա ազդեցություններից (2019թ.-ի նախագծի և նախնական խորհրդակցությունների արդյունքում բացահայտվել են 76 մշակութային միավոր Ծրագրի ուղեծրում): Ներգրավված կլինի ՇՄԱԳ-ի և շինարարության թույլտվության ստացման և մինչև շինարարությունը մշակութային ժառանգության մանրամասն ուսումնասիրությունների անցկացման թույլատրման գործընթացներում: Հետաքրքրված է Ծրագրի շինարարության ընթացքում հնարավոր պատահական գտածոների բացահայտումներով: 	<p>Աշխատաժողովներ Հանրային հանդիպումներ Անհատական հանդիպումներ Գրավոր տեղեկատվության հրապարակում Նամակներ/Էլ.նամակներ/զանգեր</p>
<p>Առողջապահության նախարարություն:</p>	<p>Հիմնական շահագրգիռ կողմերից է հանրային առողջության և անվտանգության վրա Ծրագրի հնարավոր ազդեցության ուսումնասիրության տեսանկյունից:</p>	<p>Հանրային հանդիպումներ Գրավոր տեղեկատվության հրապարակում</p>
<p>Չանգեզուր կենսոլորտային համալիր (Ներառյալ Չանգեզուր պետական արգելավայրը):</p>	<ul style="list-style-type: none"> Տարածաշրջանի ամենամեծ պահպանվող տարածքներից մեկն է, Շահագրգռված է Ծրագրի հետ սերտ համագործակցությամբ՝ պահպանվող տարածքի և ընդհանրապես տարածաշրջանի կենսաբազմազանության վրա ազդեցություններից խուսափելու համար: 	<p>Աշխատաժողովներ Հանրային հանդիպումներ Անհատական հանդիպումներ Գրավոր տեղեկատվության հրապարակում Նամակներ/Էլ.նամակներ/զանգեր</p>
<p>Արտակարգ իրավիճակների նախարարություն (Փրկարար ծառայություն, Տեխնիկական</p>	<p>Ներգրավված է գործող կանոնակարգերին համապատասխան</p>	<p>Հանրային հանդիպումներ</p>

Շահառուների խմբերը	Հետաքրքրությունը / առնչությունը	Ներգրավման եղանակը
անվտանգության ազգային կենտրոն (ՊՈԱԿ):	տեխնիկական դրույթների հաստատման գործընթացում:	Գրավոր տեղեկատվության հրապարակում
Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության հարցերով խորհուրդ և պատմամշակութային հուշարձանների պահպանության վարչություն:	Հետաքրքրված է ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքի և նշանակության և դրա վրա Ծրագրի հնարավոր ազդեցության վերաբերյալ խորհրդակցությունների մասնակցությունը:	Աշխատաժողովներ Գրավոր տեղեկատվության հրապարակում Նամակներ/Էլ.նամակներ/զանգեր
Պաշտպանության նախարարություն		Կարող է համագործակցել Ծրագրի հետ հողային հանույթը օգտագործելու նպատակով
ԱՅՈՒՆԻԲԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ		
<ul style="list-style-type: none"> • Զաղաքաշինության վարչություն, • Տրանսպորտի և ճանապարհաշինության բաժին, • Գյուղատնտեսության և բնապահպանության բաժին, • Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն, • Չարգացման ծրագրերի և վերլուծության բաժին, • Հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչություն: 	Հիմնական շահառու է տարածաշրջանային մակարդակում իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ խորհրդակցությունների առումով: Մարզպետարանն իրականացնում է հսկողություն, գույքագրում և գնահատում, ինչպես նաև Ծրագրի առաջընթացի և տարածաշրջանի տարբեր շերտերի վրա դրա ազդեցության վերահսկում և մշտադիտարկում:	Աշխատաժողովներ Հանրային հանդիպումներ Անհատական հանդիպումներ Գրավոր տեղեկատվության հրապարակում Նամակներ/Էլ.նամակներ/զանգեր
<ul style="list-style-type: none"> • Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին, • Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն: 	Կարևոր է երեխաների իրավունքների պաշտպանության տեսանկյունից, էթե ծնողները ստիպված լինեն փոխել իրենց երեխաների դպրոցը ճանապարհաշինության պատճառով:	
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՈՒՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ		
Միսիան համայնք՝ <ul style="list-style-type: none"> • Զաղաքաշինության կամ սոցիալ-տնտեսական զարգացման բաժին, • Բնապահպանության, գյուղատնտեսության և զարգացման ծրագրերի բաժին: 	<ul style="list-style-type: none"> • Անմիջականորեն կգրավեն ազդակիր բնակչության հետ աշխատանքներով, այն է՝ բնակիչներին ներկայացնել Ծրագրի նպատակը, կազմակերպել հանրային լուսններ և տեղեկատվության հրապարակումը, հավաքագրել բնակիչների մտահոգությունները և առաջարկությունները, ինչպես նաև մեղմացնել թյուրիմացությունները, • Տիրապետում են բնակչության, հողերի, տնային տնտեսության սոցիալ-տնտեսական պայմանների և այլնի վերաբերյալ տվյալների, • Ակնկալում են համայնքի սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում, 	Հանրային հանդիպումներ Անհատական հանդիպումներ Էլ.նամակներ Նամակներ/Գրավոր տեղեկատվության հրապարակում Չանգեր
Քաջարան համայնք՝ <ul style="list-style-type: none"> • Զաղաքաշինության կամ սոցիալ-տնտեսական զարգացման բաժին, • Բնապահպանության, գյուղատնտեսության և զարգացման ծրագրերի բաժին: 		

Շահառուների խմբերը	Հետաքրքրությունը / առնչությունը	Ներգրավման եղանակը
<ul style="list-style-type: none"> • Քաջարան համայնքի ներկայացուցիչներ Քեդի և Լեռնաձոր վարչական տարածքներում, • Միսիան համայնքի ներկայացուցիչներ Իշխանասար, Ադիտու, Նորավան, Վաղատին, Որոտնավան, Դարբաս (Դարբաս և Շամբ բնակավայրեր), Լոր, Շենաթաղ բնակավայրեր/վարչական տարածքներում: 	<ul style="list-style-type: none"> • Շահագրգռված են հասկանալ Ծրագրի ԲԱՍ հնարավոր բացասական և դրական ազդեցությունները: • Անմիջականորեն կգրառվեն ազդակիր բնակչության հետ աշխատանքներով, այն է՝ բնակիչներին ներկայացնել Ծրագրի նպատակը, կազմակերպել հանրային լուսմներ և տեղեկատվության հրապարակումը, հավաքագրել բնակիչների մտահոգությունները և առաջարկությունները, մեղմացնել թյուրիմացությունները, ինչպես նաև աջակցել հողերի/գույքի օտարմանը (եթե այդպիսիք առկա են), • Տիրապետում են բնակչության, հողերի, տնային տնտեսության սոցիալ-տնտեսական պայմանների և այլնի վերաբերյալ տվյալների, • Ակնկալում են, որ տեղական բնակչությունը կշահի ծառայությունների զարգացումից (մանրածախ առևտուր, հանրային սնունդ և կացարան) և ժամանակավոր զբաղվածությունից: 	<p>Համատեղ դաշտային այցելություններ Հանրային հանդիպումներ Անհատական հանդիպումներ Էլ.նամակներ Նամակներ/Գրավոր տեղեկատվության հրապարակում Չանգեր</p>
ՈՉ ԴԵՏԱԿԱՆ ԱՅՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ		
<p>Ազգային ՀԿ-ներ՝ «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» (ՀԿՀԱԱՇՄ ՀԿ), «Հայաստանի թռչուններ» ծրագիր, Յակոբեան բնապահպանական կենտրոն, CENN-ի (Caucasus Environmental NGO Network) Հայաստանյան գրասենյակ, «Թռչնադիտարկման հայկական ասոցիացիա», (AWP) WWF Հայաստան, "ԷկոԼուր" տեղեկատվական ցանց, "ԻԿՕՍՕՍ/ՐԱՅԱՍՏԱՆ", "Հագարաշեն ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն" ՀԿ (հավատարմագրված է UNESCO-ի կողմից), Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, Սշակութային ժառանգության կենտրոն, "Թրեյլս Ֆոր չեյնջ" ՀԿ, "Հայաստանում զբոսաշրջության կայուն զարգացում" ՀԿ և այլն:</p> <p>Տարածաշրջանային և տեղական ՀԿ-ներ և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպություններ՝ Միսիանի տուրիզմի կենտրոն, "Միսիանի կանանց ռեսուրս կենտրոն" հիմնադրամ, "Կապանի կանանց ռեսուրս կենտրոն" ՀԿ "Խուստուկի" բնապահպանական ՀԿ, "Էկոլոգիական անվտանգության և</p>	<ul style="list-style-type: none"> • Խորհրդակցություններ կունկրետ թեմաներով, ինչպիսիք են կենսաբազմազանությունը, գենդերային հարցերը կամ մշակութային ժառանգությունը, • Հետաքրքրված են Ծրագրի պլանավորված գործողությունների, մարդկանց և շրջակա միջավայրի վրա դրա դրական և բացասական ազդեցությունների մասին տեղեկություններով: <p>ՀԿ-ների հետ սերտ համագործակցությունը Ծրագրին թույլ կտա ապահովել ավելի հարթ հարորդակցություն բնակիչների հետ և կազմակերպել ավելի ներառական հանրային լուսմներ:</p>	<p>Աշխատաժողովներ Հանրային հանդիպումներ Գրավոր տեղեկատվության հրապարակում Նամակներ/Էլ.նամակներ/զանգեր</p>

Շահառուների խմբերը	Հետաքրքրությունը / անջությունը	Ներգրավման եղանակը
<p>Ժողովրդավարության" ՀԿ, "ԷԿՈ-ՍԻՍ" ՀԿ, Քաջարանի գենդերային հիմնախնդիրների համատիրություն, "Չբուսավայրեր հարավից" ՀԿ, "Սյունիք-գարգացում" ՀԿ և ուրիշներ:</p> <p>Միջազգային ՀԿ-ներ կամ քաղաքացիական հասարակության կազմակերպություններ՝ Շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության հարցերով ԵՄ հիմնադրամ:</p> <p><i>ՀԿ-ների ցանկը կլրացվի և կհստակեցվի ՇՄՍԱԳ-ի մշակման և Ծրագրի իրականացման ընթացքում:</i></p>		
<p>Ազգային, տարածաշրջանային և տեղական լրատվամիջոցներ:</p>	<p>Լրատվամիջոցների հետ համակարգված և կանոնավոր շփումը անհրաժեշտ կլինի համոզվելու համար, որ թարմացումների մասին տեղեկատվությունը ժամանակին կհաղորդվի տեղական լսարանին և վստահություն ձևավորի՝ ռեպուտացիոն ճգնաժամերից խուսափելու համար:</p>	<p>Հանրային հանդիպումներ Հաղորդակցություն ՉԼՄ-երի հետ Մամուլ հաղորդագրություններ</p>
<p>Ակադեմիական հանրություն (Գիտությունների Ազգային Ակադեմիա, Հայաստանի Ճարտարապետության և Շինարարության ազգային Համալսարան, բնագիտական ինստիտուտներ և այլն):</p>	<p>Կարող է հետաքրքրված լինել Ծրագրի հետ կապված ԲևՍ ազդեցություններով և ներգրավվել ՇՄՍ-ի կամ այլ նախարարությունների կողմից որպես խորհրդատու հանրային քննարկումների ընթացքում կամ փորձագիտական կարծիք ձևավորելու համար:</p>	<p>Հանրային հանդիպումներ Գրավոր տեղեկատվության հրապարակում Հաղորդակցություն ՉԼՄ-երի հետ</p>
<p>Բիզնես (հանքարդյունաբերական ընկերություններ, մթերքի վերամշակում և այլն):</p>	<p>Ակնկալում են օգտվել նոր ճանապարհից և կարող են հետաքրքրվել Ծրագրի հետ կապված ԲևՍ ազդեցություններով:</p>	

5.4. Շահառուների ներգրավման ծրագիրը

Շահառուների ներգրավման ծրագիրը մշակվել է բոլոր նույնականացված շահառուների հետ առավել արդյունավետ ներգրավվածությունն ապահովելու, Պատվիրատուի և շահառուների միջև հարգալից հարաբերություններ ստեղծելու և պահպանելու, ինչպես նաև հնարավոր կոնֆլիկտները կանխելու համար: Շահառուների ներգրավման նախնական ծրագիրը նախնական գնահատման փուլի համար մշակվել է որպես գնահատման հաշվետվության մաս և ներկայացվել է 2022 թվականի ապրիլ-մայիս ամիսներին:

Ստորև ներկայացված Շահառուների ներգրավման ծրագիրը (**Աղյուսակ 3**) հիմնված է նախնական գնահատման փուլում քաղված դասերի վրա և ընդգրկում է Ծրագրի նախագծման, նախաշինարարական և շինարարական փուլերը:

Ծրագիրը պետք է վերանայվի և թարմացվի ամենամյա մեկ տարվա ընթացքում՝ շինարարության փուլի մեկնարկից հետո, այնուհետև՝ մինչև Ծրագրի օբյեկտները շահագործման հանձնելը: Այն իրենից ներկայացնում է կոնկրետ գործողությունների ծրագիր՝ պարտականությունների բաշխմամբ և առաջարկվող գործողությունների իրականացման ժամկետներով: Եթե Ծրագրի իրականացման ընթացքում լինեն փոփոխություններ, որոնք պահանջում են ներգրավման մեխանիզմների փոփոխություն և/կամ հայտնաբերվեն նոր շահառուներ, ապա Ծրագիրը նույնպես պետք է վերանայվի:

Շահառուների ներգրավումը կշարունակվի տեղեկատվության հրապարակմանը զուգահեռ և կներառի մի քանի բաղադրիչներ՝ նպատակ ունենալով շարունակել Ծրագրի և դրա ԲԸՍ հետևանքների վերաբերյալ բովանդակալից խորհրդակցությունների իրականացումը և տեղեկատվության տրամադրումը.

- **Ծրագրի ՇՄԱԳ-ի հրապարակում և խորհրդակցություններ՝** այս բաղադրիչը ղեկավարվում է Խորհրդատուի կողմից՝ ՃԴ-ի և տեղական իշխանությունների աջակցությամբ: ՇՄԱԳ փաթեթի հրապարակմանը հաջորդելու են շահառուների և հանրության հետ խորհրդակցությունները և հանդիպումները (դրանց կներառեն հետևյալ թեմատիկ ուղղությունները՝ կենսաբազմազանություն, հողերի օտարում, մշակութային ժառանգություն, տնային կենդանիների և գյուղ.տեխնիկայի անցումներ): Ներգրավման վայրերն ու մեթոդները կորոշվեն հաշվի առնելով նախնական գնահատման փուլի փորձը և այդ պահին COVID համավարակով պայմանավորված իրավիճակը:
- **Կենսաբազմազանության խնդիրներին առնչվող խորհրդակցությունները** սկսվել են 2021 թվականի ապրիլին և շարունակվում են անցկացվել «Ձանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի (պատասխանատու է Ձանգեզուրի պետական արգելավայրի և այլ վեց ՀՊՏ-ների համար և ենթակա է շրջակա միջավայրի նախարարությունը), Հայաստանում բնապահպանական հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ WWF Armenia, Հայաստանի թռչուններ (ՀԹ); «Հայաստառ» ՊՈԱԿ, «Սիսիանի անտառտնտեսության» և «Կապանի անտառտնտեսության» մասնաճյուղերի, ՇՄՆ հետ: Սոցիալական ելակետային ուսումնասիրությունների ընթացքում քննարկված Էկոհամակարգերի օգտագործումը և Էկոհամակարգերից կախվածությունը կստուգվեն ՇՄԱԳ-ի խորհրդակցությունների ընթացքում:
- **Հողերի օտարման մեխանիզմների և փոխհատուցման մոտեցումների վերաբերյալ խորհրդակցությունները** անցկացվել են մեկնարկման և նախնական գնահատման փուլում և կշարունակվեն ՇՄԱԳ-ի խորհրդակցությունների ընթացքում: Ծրագրի տարաբնակեցման ծրագրի ընթացիկ նախապատրաստման փուլում իրականացվում է առանձին ներգրավման գործընթաց:
- Սոցիալական ելակետային ուսումնասիրությունների և շրջանակային խորհրդակցությունների ընթացքում **իրականացրած մշակութային ժառանգության խնդիրների վերաբերյալ խորհրդակցությունները** կշարունակեն անցկացվել ՇՄԱԳ-ի խորհրդակցությունների (ներառյալ թեմատիկ) ընթացքում: Մինչև հրապարակումը, 2023 թվականի ապրիլին, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ տեղի ունեցավ աշխատաժողով՝ վավերացնելու համար գրանցված մշակութային ժառանգության օբյեկտների վրա հնարավոր ազդեցությունների/ռիսկերի գնահատումը և առաջարկվող մեղմացման միջոցառումները: Հերթական հանդիպումն անցկացվել է "ԻԿՕՄՕՍ Հայաստան"-ի հետ 2023 թվականի մայիսին:
- **Հողային հանույթների տեղադրման վայրերի վերաբերյալ խորհրդակցությունները** շարունակվում են ՇՄԱԳ-ի սկզբնական փուլից (2021թ. ապրիլ): Դրանք ներգրավել են տեղական և համայնքային իշխանություններին, կենսաբազմազանության շահագրգիռ կողմերին և տեղի բնակիչներին: Խորհրդակցությունները նպատակաուղղված են Ծրագրի համար պահանջվող այլընտրանքային/հավելյալ հողային հանույթի տեղադրման վայրերի որոնմանը: Մինչև հանրայնացումը, 2023 թվականի ապրիլին, շրջակա միջավայրի նախարարության հետ խորհրդակցություն է անցկացվել հողային հանույթի տեղադրման վայրերի և բնապահպանական այլ թեմաների շուրջ:
- **Հատուկ նշանակության միջոցառումները** պետք է իրականացվեն մինչև շինարարության սկիզբը և դրա ընթացքում և նպատակաուղղված կլինեն ՇՄԱԳ շրջանակներում պարտավորությունների կատարմանը և կներառեն առնվազն հետևյալ թեմաները՝

- Համայնքի առողջությունը և անվտանգությունը (ներառյալ հետիոտների և ճանապարհների անվտանգությունը, հետիոտնային անցումները),
- Աշխատատեղերի ստեղծման հնարավորությունները և մարտահրավերները, ներառյալ կանանց մասնակցությունը,
- Սահմանափակ հասանելիությունը որոշ տեղական օբյեկտներ/ճանապարհներ և այլընտրանքային մուտքերը,
- Աղմուկի ազդեցությունը և տեղային մեղմացնող միջոցառումները:

Ի լրումն ստորև բերված Ծրագրի (չի հանդիսանում ՇՄԱԳ-ի մաս), ՃԴ-ն կպատրաստի փաստաթղթեր ՇՄԱԳ գործընթացի համար, կանցկացնի ՇՄԱԳ հաշվետվության հրապարակումն ու խորհրդակցությունները՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Առաջին հանրային քննարկումները տեղի են ունեցել 2023 թվականի ապրիլի 13-ին և 14-ին Քաջարան և Սիսիան քաղաքներում: Երկրորդ հանրային քննարկումները պետք է կազմակերպվեն Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնի կողմից 2023 թվականի գարնան վերջ/ամռան սկիզբ: Եվս երկու հանրային քննարկումներ կիրականացվեն 2023 թվականին՝ ՇՄԱԳ հիմնական փուլում:

Հրապարակման ժամանակաշրջանից հետո կմշակվի խորհրդատվական հաշվետվություն՝ շահագրգիռ կողմերից ստացված արձագանքները փաստաթղթավորելու և ՇՄԱԳ-ի հրապարակման ընթացքում ներգրավման գործողությունները ամփոփելու նպատակով: Այն կցվելու է ՇՆԴ-ի թարմացված տարբերակին և կհրապարակվի ՃԴ-ի ծրագրին վերաբերվող կայքում:

Աղյուսակ 3. Շահառուների ներգրավման ծրագիր

№	Գործողություն	Թիրախային խումբ	Տեղեկատվական նյութեր	Ժամանակահատված	Պատասխանատու կողմ	Գտնվելու վայրը	COVID-19 սահմանափակումների հետ կապված հաղորդակցության միջոցներ
Ծրագրի նախագծման փուլ							
1.	Ծրագրի նորությունների, իրականացման կարգավիճակի և ԲևՍ արդյունավետության վերաբերյալ կանոնավոր թարմացումների ապահովում:	Բոլոր շահառուները	ԲևՍ տեղեկատվություն Ծրագրի վերաբերյալ, Հաճախակի տրվող հարցեր (ՀՏՀ) Ծրագրի ԲևՍ ազդեցությունների և մեղմացման վերաբերյալ, մամուլի հաղորդագրություններ, հայտարարություններ ՉԼՄ-երում և սոցիալական ցանցերում:	Երբ Ծրագրի նորությունները հասանելի լինեն, երբ որոշ նշածողի հասնեն/ շինարարության առաջընթաց գրանցվի և այլն:	ՃԴ, Շինարարության կապալառու	ՃԴ-ի կայքէջ https://armroad.am/en / https://armroad.am/am , ՃԴ-ի Youtube-յան ալիքում տեսանյութեր, Հեռուստաալիքներ, ՉԼՄ-եր, սոցիալական ցանցեր, տեղական կառավարման մարմինների տեղեկատվական վահանակներ:	Տեղեկատվության տարածում ՃԴ-ի սոցիալական ցանցերում, ինչպիսիք են Facebook-ը, Twitter-ը, Instagram-ը և այլն:
2.	Ծրագրի բողոքարկման մեխանիզմի պահպանում, Նման մեխանիզմի և դրա իրականացման պատասխանատու անձի կոնտակտային տվյալների մասին հանրության ծանուցում, Ստացված բողոքների և հարցումների գրանցում հատուկ	Հնարավոր ազդակիր կողմեր, այլ շահառուներ	Ծանուցում, տեղեկատվական հայտարարություն Բողոքարկողին տրամադրվող բողոքի լուծման	ՇՄՍԱԳ գնահատման փուլում ստեղծված բողոքարկման մեխանիզմի գործարկում, ՇՄՍԱԳ-ի հրապարակման և հողի օտարման գործընթացի փուլերում բողոքարկման մեխանիզմի	ՃԴ (Բողոքարկման մեխանիզմի իրականացման պատասխանատու անձ)	Տեղեկատվություն բողոքարկման մեխանիզմի վերաբերյալ ՃԴ-ի կայքէջում, Հայտարարությունների վահանակներ` • ՃԴ-ի Երևանյան գրասենյակում, • Վարչական շենքերում` o Միսիան համայնքի, Իշխանասար, Աղիտու, Նորավան, Վաղատին, Որոտնավան, Դարբաս,	Telegram, WhatsApp, IMO և այլ հաղորդագրության միջոցներով ստացված բողոքների գրանցում, ներառյալ անանուն հաղորդագրությունները և ՃԴ-ի Facebook, Twitter, Instagram և այլ սոցիալական ցանցերի միջոցով:

№	Գործողություն	Թիրախային խումբ	Տեղեկատվական նյութեր	Ժամանակահատված	Պատասխանատու կողմ	Գտնվելու վայրը	COVID-19 սահմանափակումների հետ կապված հաղորդակցության միջոցներ
	գրանցամատյանում (ներում):		նյութերը	ներկայացում ծրագրի ողջ կենսացիկլի ընթացքում:		Գետաթաղ, Լոր և Շենաթաղ գյուղական բնակավայրերի, <ul style="list-style-type: none"> Բաջարան համայնքի, Գեղի և Լեռնաձոր գյուղական բնակավայրերի: 	
3.	Ծրագրի ԲԱՍ փաստաթղթերի 120-օրյա հրապարակում, ներառյալ ՇՄՍԱԳ, հաշվետվությունը, Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը (ԲՍԿՊ), Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլանը (ԲՍԳՊ), ՇՆՊ, Ոչ տեխնիկական ամփոփագիրը (ՈՏԱ), Կենսաբազմազանության գործողությունների պլանը (ԿԳՊ), տարաբնակեցման պլանը (ՏՊ):	Գործող և միացնող ճանապարհների երկայնքով հնարավոր ազակիր բնակավայրեր, ՀԿ-ներ, ՉԼՍ-ներ, ակադեմիական հանրություն և այլ շահառուներ:	ՇՄՍԱԳ փաթեթ՝ ՇՄՍԱԳ հաշվետվություն, ՇՍԿՊ, ԲՍԳՊ, ՇՆՊ, ՈՏԱ, ԿԳՊ և ՏՊ:	2023 թ.-ի հուլիսի միջևամաս - նոյեմբերի միջևամաս	ՃԴ, ՎՉԵԲ, ԱՉԲ և ԵՆԲ	ՃԴ-ի կայքէջ, ՎՉԵԲ-ի, ԱՉԲ և ԵՆԲ-ի կայքէջեր, Խորհրդատուի սեփական և LinkedIn կայքերը, Բոլոր փաստաթղթերի թղթային տարբերակները հասանելի են՝ <ul style="list-style-type: none"> ՃԴ-ի Երևանյան գրասենյակում, Միսիան և Բաջարան համայնքների վարչական շենքերում: Ոչ Տեխնիկական Ամփոփագրի (ՈՏԱ) թղթային տարբերակները հասանելի են՝ <ul style="list-style-type: none"> Միսիան համայնքի՝ Իշխանասար, Աղիտու, Նորավան, Վաղատին, Որոտնավան, Դարբաս, Գետաթաղ, Լոր և Շենաթաղ գյուղերի վարչական շենքերում, Բաջարան համայնքի 	Տեղեկատվության տարածում ՃԴ-ի Facebook, Twitter, Instagram և այլ սոցիալական ցանցերի միջոցով: Ծրագրի ԲԱՍ փաստաթղթերի հղումներն ուղարկվում են շահագրգիռ կողմերին էլեկտրոնային նամակների միջոցով:

№	Գործողություն	Թիրախային խումբ	Տեղեկատվական նյութեր	Ժամանակահատված	Պատասխանատու կողմ	Գտնվելու վայրը	COVID-19 սահմանափակումների հետ կապված հաղորդակցության միջոցներ
						Գեղի և Լեռնաձոր գյուղերի վարչական շենքերում:	
4.	ՇՄՍԱԳ հաշվետվության հրապարակման և խորհրդակցությունների մասին հայտարարություններ	Բոլոր շահառուները	Հակիրճ տեղեկատվություն Շրագրի, անցկացման վայրի, հանդիպումների օրվա և ժամի վերաբերյալ	2023թ.-ի հուլիսի սկիզբ 2023թ.-ի հուլիս-հոկտեմբեր	Խորհրդատուն՝ ՃԴ-ի աջակցությամբ	Թերթեր, ՃԴ-ի կայքէջ, Խորհրդատուի սեփական և LinkedIn կայքեր, Միսիան և Զաջարան համայնքների վարչական շենքերի և ազդակիր գյուղական վարչական միավորների տեղեկատվական վահանակներ, Հնարավոր ազդակիր բնակավայրերի հասանելի վայրերում հրապարակումներ:	Տեղեկատվության տարածում ՃԴ-ի Facebook, Twitter, Instagram և այլ սոցիալական ցանցերի միջոցով: Շրագրի ԲևՍ փաստաթղթերի հղումներն ուղարկվում են շահագրգիռ կողմերին Էլեկտրոնային նամակների միջոցով:
5.	ՇՄՍԱԳ հանրային քննարկումներ, հանդիպումներ	Հնարավոր ազդակիր բնակավայրեր, ՀԿ-ներ, ՉԼՄ-ներ, ակադեմիական հանրություն և այլ շահառուներ:	ՇՄՍԱԳ փաթեթ՝ ՇՄՍԱԳ հաշվետվություն, ՇՍԿՊ, ԲՍԳՊ, ՇԼՊ, ՈՏԱ, ԿԳՊ, և ՏՊ:	2023թ.-ի հուլիս-հոկտեմբեր	Խորհրդատու, ՃԴ՝ տեղական կառավարման մարմինների աջակցությամբ	<ul style="list-style-type: none"> • Միսիան • Զաջարան • Երևան • Շրագրի տարածաշրջանի ազդակիր բնակավայրեր / վարչական միավորներ: 	Համաժողովների անցկացում համացանցային հարթակների միջոցով, օրինակ. Zoom, Cisco Webex, Google Meet և այլն:
6.	Անհրաժեշտության դեպքում թիրախային խորհրդատվությունների անցկացում:	Հնարավոր ազդակիր շահառուներ, որոնք բարձրաձայնել են խնդիրներ,	Տեղեկատվական տեղեկագրեր, Շրագրի ԲևՍ ազդեցությունների և մեղմացումների վերաբերյալ ՀՏՀ-րի	2023թ.-ի հուլիս-հոկտեմբեր	ՃԴ, Խորհրդատուն՝ տեղական կառավարման մարմինների	Շրագրի տարածքում ազդակիր բնակավայրեր/ վարչական միավորներ:	Համաժողովների անցկացում համացանցային հարթակների միջոցով, օրինակ. Zoom, Cisco Webex, Google Meet և

№	Գործողություն	Թիրախային խումբ	Տեղեկատվական նյութեր	Ժամանակահատված	Պատասխանատու կողմ	Գտնվելու վայրը	COVID-19 սահմանափակումների հետ կապված հաղորդակցության միջոցներ
		Նոր նույնակա-նացված շահառուներ:	տեղեկատվական թերթիկներ և այլն:		աջակցությամբ		այլն:
